ԱՐԱՐԱՉ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Գ. ՏԱՐԻ ԻԳ. ՄԱՐՏ 31

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ՕՐՀՆՈՒԹԻՒՆ *որբալոյս Միւռօնի* .	113
ԿՐՕՆԱԿԱՆ.	ՍՈՒՐԲ Լուսաւորիչ և Հայաստանեայց Ս. Եկեղեցի. Գ. Ս.	114
	ՔՐԻՍՏՈՆԷԻ *միայնութիւնը* (Թարգմ.) Եղիշէ Քահ. Դեղամեանց . . .	129
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ.	ՄԱՅՐՆԻ *լեզուս* (Շարաւնակելի) Ս. Մանդինեան	144
	ԿԱՐՍԻ *վիճակի հնութիւններէ մասին* (շարունակելի). Յ. Վ. Մ. . . .	155
ԱԶԳԱՅԻՆ.	Ի *գաւառութիւն*.	162
	ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.	167
	Մահագոյժ.	168
	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ	

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1890

ՑՈՒՑԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ.

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԼԶՄԻԱԾՆԻ.

Այրիվանք կամ Գեղարդավանք.	—	10
Աստուածպաշտութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենափր տարեկան ամբողջ կազմակ.	2	—
Աւետարան համաբարբառ վկայութեամբ	—	80
Բէնիամին Ֆրանկլինի կեանքը	—	20
Գիրք հանդիսակատարութեանց կայսերական տօնից	—	50
* Գոթաղիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	10
Դասագիրք բազպատական Աշխարհագրութեան		50
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	—	50
Նոյն.—Միջին դարուց	—	50
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ. Արէլ Եպիսկոպոսի	—	10
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	—	10
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոց Ա. Գալֆայեան	1	—
* Ժամագիրք տունի	8	—
Ժամագիրք ձեռաց	2	—
* Լսարան Աւագ ուրբաթ	—	10
* Լսարան Կ. Պոլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հոխիսիմ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս. Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկարանութեան	—	20
Կամուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	20
Կանոն աշակերտաց Գէորգեան ճեմարանի	—	5
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Գ. տարեշրջի Գէորգեան ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ Գ. — ՇԲՋԱՆ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԳ. ՄԱՐՏ 31

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՕՆԻ

Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմբ. 30ին ի տօնի Վարագայ Ս. խաչին՝ ըստ յաջողելոյ Տեառն Ընտուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԿՐՏԻՉ ժողովրեալ է Ս. Միւռօնն օրհնել:

Ս. Միւռօնի օրհնութիւնը Հայաստանեայցս Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Էջմիածին և վայելեն Ս. Միւռօնի օրհնութեան շնորհը:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻ.

Մեր պատմական աւանդութիւնները հաստատում են, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ սկիզբը դրւում է Քրիստոսի անմիջական աշակերտների ձեռքով առաջին դարում: Թէպէտ երեք դար շարունակ քրիստոնէութիւնը գոյութիւն ունէր Հայաստանում, թէպէտ երբեմն թափւում էր մարտիրոսների արիւնը քրիստոնէութեան անդաստանը ոռոգելու համար, բայց դեռ ևս հեթանոսութիւնը զօրեղ էր և իւր զօրութեամբ ճնշում էր քրիստոնէութիւնը:

Ճշմարիտ է, այդ երեք դարերում քրիստոնէութիւնը Հայաստանում գոյութիւն ունէր, աճում էնը, բայց եկեղեցին որոշ կազմակերպութիւն չունէր և չէր էլ կարող ունենալ, քանի որ դեռ ևս մեծ խորշերում և քարանձաւներում էր պաշտւում քրիստոնէից Աստուածը:

Հայաստանեայց եկեղեցին իւր այդ անունն կրելու իրաւունք ստացաւ չորրորդ դարու սկզբում Ս. Լուսաւորչի գործունէութիւնից յետոյ: Լուսաւորիչ մի նոր վարդապետութեան քարոզիչ, մի նոր հիմնարկութեան վերահաստատող լինելով պէտք է և որոշ դաղափար ունենար այդ հիմնարկութեան վերայ և պարզ պէտք է լինէր նորա համար նոր հաստատութեան նպատակը. մեր այս շարադրութեամբ կամենում ենք պարզել այդ խնդիրը: Անշուշտ Լուսաւորչի աչքում այդ հաստատութիւնը շատ բարձր և մեծ նշանակութիւն պէտք է ունենար, քանի որ նորա քարոզած ճշմարտութիւնների համար այնքան տանջանքներ կրեց և միայն բազմաթիւ տարիներ անցնելուց յե-

տոյ, նորա հաւատարմութիւնը զարմանալի յաղթութեամբ պսակուեցաւ։

Լուսաւորչի անձնաւորութեան և հայեացքների հետ լաւ ծանօթանալու համար ոչ միայն աչքի առաջ պէտք է ունենալ նորա անունով մնացած գրաւոր յիշատակարանները, այլ և այն բոլոր պատմական և աւանդական դուցումները, որ հասել են մեզ նորա ժամանակակից կամ յետագայ Հայ և օտար պատմիչների միջնորդութեամբ։ Ինչ աղբիւրների էլ դիմելու լինինք, Լուսաւորիչ երևում է մեզ մի բարձր արժանաւորութեան տէր անձնաւորութիւն, իրաւամբ արժանի կրելու Հայաստանեայց Լուսաւորիչ անունը։ Մեծ անձնաւորութիւնները միայն կարող են մեծ գործեր կատարել և մեծ գաղափարներ պարզել, և Լուսաւորիչ գոյանից մէկն է։ Ս. Գրիգորի անձնաւորութիւնը կարելի է որոշել աչքի առաջ ունենալով Գրիգոր մեծ Խոսրովականողին, Գրիգոր առաքեալին և Գրիգոր Լուսաւորչին։ Երեք բաւ, որոնք իրենց մէջ բովանդակում են մի մեծ մարդու կեանքն ու գործունէութիւնը և մի եկեղեցւոյ ուղղութիւն. եկեղեցւոյ ուղղութիւն ասացինք, որովհետև Լուսաւորչի անձնաւորութեան հետ կապուած են Հայաստանեայց եկեղեցւոյ կազմակերպութիւնն ու նպատակը։

Հայաստանեայց եկեղեցին իրաւամբ նորան մեծ Խոսրովականող անուանեց և միմիայն նորան, որովհետև մեր Ս. Հայրերից ոչ մէկը նորա բարձրութեան հասնել չկարողացաւ։ Նորա հաւատարմութիւնը դէպի իւր կրօնը, նորա հաւատը դէպի քրիստոնէական ճշմարտութիւնները և վերջապէս հաստատամտութիւնն ու առաքելական գործունէութիւնը այնքան բարձր են, որ ամենքի համար անհասանելի օրինակ կարող է լինել։ Մեծ նահատակը իւր ճշմարիտ համբերութեամբ, կենդանի մարտիրոսը իւր ճշմարիտ խոստովանութեամբ մեռնակ յաղթող հանդիսացաւ մեծ պատերազմի մէջ։ Երկու կուսակցութեան առաջնորդներ մրցում էին, մէկը գործ դնելով իւր բոլոր արքայական իշխանութիւնը, միւսը հաստատամտութիւնն ու համբերութիւնը, մէկը թիկունք ունենալով մի ամբողջ երկրի ժո-

ղովուրդ, մի տէրութիւն, միտը մեհեակ, բայց ճշմարտութեան վերայ չհնուաձ: Եւ վերջինս յաղթող հանդիսացաւ. թագաւոր սիրոջ շրթունքները համբուրելին արդար ծառայի ձեռքը: Եթէ Հայաստանեայց եկեղեցին նորան մեծ խոստովանող անուանեց, նշանակում է լաւ հասկացաւ Լուսաւորչի նշանակութիւնը. մեր եկեղեցին իրաւունք ունէր այդ անունը նորան տալու, քանի որ «Գրիգորիոս Հայր հաւատոյ և վայելուչ պսակ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» էր, «անուշահոտ վարդ» էր, որ և «անուշահոտ բուրմանքն եղիւ Հայաստանեայց աշխարհս», ինչպէս ասում է Երզնկացին: Լուսաւորչ օտարների աչքում և նոյնքան մեծ է, որքան և Հայոց. Ոսկեբերան և նորան անուանում է «մեծ խոստովանող», «մարտիրոսաց պարծանք», «երկնային զօրաց քաղաքակից», «մարմնաւոր հրեշտակ յերկրի» և այլն:

Ս. Գրիգոր իւր յաղթութեան պսակը պէտք է ստանար, իւր համբերութեան պտուղը պիտի քաղէր. քրիստոնեայ լինելու համար տասնուհինգ տարի տանջուեցաւ, այժմ նոյն քրիստոնէութեան քարոզիչ, նոյն քրիստոնէութեան առաքեալ պիտի դառնար: «Առաքելոյն Թադէոսի պարգեւական ղաւտկն, կենդանի նշխարաց նորին օրհնութեան շառաւիղն, վիճակեալ աշխարհի նորա ընտրեալ հոգաբարձուն» պէտք է կատարէր այն ամենը, ինչ որ անօրինել էր նորա մասին վերին տեսչութիւնը: Հայաստանեայց եկեղեցւոյ առաքեալը պէտք է ոչնչէր իւր առաքելական գործունէութիւնը: Հայաստանեայց եկեղեցին նորան առաքեալ է համարում ոչ թէ միայն հիմնուելով այն աւանդութեան վերայ, որ քիչ առաջ ակնարկեցինք երզնկացու խօսքերով, այլ և, մի կողմից աչքի առաջ ունենալով նորա ճշմարիտ առաքելական գործունէութիւնն և միւս կողմից առաքելական կոչում ստանալը վերին տեսչութիւնից: Չէ որ Լուսաւորիչ և նոյնպիսի ընտրեալ առաքեալ է, ինչպէս և Քրիստոսի միւս անմիջական առաքեալները. թէպէտ Լուսաւորիչ չտեսաւ Նորան այս երկրում, չլսեց Նորա քարոզութիւնները, Նորա խաչելութեան և յարութեան ականատես չեղաւ, բայց տեսաւ

Նորան բոլոր աստուածային զօրութեամբ, տեսաւ Նորան շրջապատուած երկնային անթիւ զօրքերով, տեսաւ Նորան ոսկի ուռը ձեռքին՝ երկնքից երկիր իջնելիս: Պօղոս առաքեալն էլ Քրիստոսի անմիջական աշակերտներից չէր, բայց մրճէ դրանով Նորա արժանաւորութիւնը պակասում է մեր աչքում. Հայաստանի Պօղոս առաքեալը մեր լուսաւորիչն եղաւ, և նման է Նորան ոչ միայն ընտրութեամբ, այլ և քարոզած գաղափարներով: Ընտրութեամբ նման է, որովհետև սա էլ, ինչպէս և Պօղոս «զօծումն քահանայապետութեան ոչ ի մարդկանէ, և ոչ ի ձեռն մարգոյ, այլ ի վերին տեսչութենէն և ի հոգւոյն յայտնութենէ կոչեցեալ ընկալաւ»: Թէպէտ այս խօսքերը Ռակեբերանին է, բայց հիմնուած պատմական ճշմարիտ փաստերի վերայ: Զէ որ Լուսաւորիչ անարժան էր համարում իրեն քահանայապետական բարձր կոչման և հրաժարուում էր. այն անձնաւորութիւնն, որ «քահանայից գաղափար» էր, «հոլովապետաց նկարագիր», «հայրապետաց գեղեցկութիւն», «հաստատեալ սիւն եկեղեցւոյ», «ուսուցիչ ուղղափառութեան», «մխոթելոց առաջնորդ», «առաքելոց լրումն», հրաժարուում էր մինչև այն ժամանակ, երբ վերջապէս հրեշտակից լսեց աստուածային կամքը. մի իշխեսցես ինչ պնդել յամառել վասն այնր, զի ի Քրիստոսէ է այդ քեզ հրամայեալ»: Ռակեբերան իւր ներբողի մէջ խօսելով Լուսաւորչի առաքելական ընտրութեան մասին, Աստուծոյ խօսքերով ասում է Նորան. «առաքեալքն իմ՝ երկոտասան ի վերայ ինքեանց բաժանեցին վիճակաւ զընդհանուր աշխարհս, իսկ դու միայն ընդ համամիտս ինձ վիճակաւ քարոզեսցես զաւետարանն իմ». սրեմն Լուսաւորիչ Ռակեբերանի նման մարդու աչքում առաքեալների չափ և մինչև անգամ աւելի նշանակութիւն ունի, ահա Լուսաւորչի մեծութեան մի մեծ ապացոյց:

Լուսաւորիչ այն անձնաւորութիւնն էր, որ իւր 15 ամեայ սոսկալի չարչարանքներով և վաթսուն ու վեց օրուայ առաքելական քարոզութեամբ հեթանոս Հայաստանի համար երկինք բաց արեց, բաց արեց ողորմութեան դռները, մի ճանա-

պարհ ցոյց տուէց դէպի բարձրն ու վսեմը վերանալուս։ Հայաստանեայց Լուսաւորիչը իրաւամբ արժանացաւ այդ մեծ անուան. «Լուսաւորիչ» անունը Հայաստանեայց եկեղեցւոյ վերանորոգչի յատուկ անունն է. եթէ մենք ասում ենք «նախկին Լուսաւորիչը» այդ միայն իսկական Լուսաւորչից զանազանելու համար է. Հայ աղգի Լուսաւորիչը Ս. Գրիգորն է։ Ո՞վ այնպիսի նշանակութիւն, հեղինակութիւն տուաց, որքան Լուսաւորիչ և ո՞վ այնպիսի վսեմ և անթառամելի պսակ տուաց Հայ աղգից, ինչպէս Լուսաւորիչ։ Լուսաւորիչ Հայաստանեայց՝ ահա այն անապական և անթառամելի պսակը, որով Հայ աղգը զարդարել է իւր նախահայրապետի սրբազան ճակատը. «Լուսաւորիչ Հայաստանեայց» ահա մի յաւիտենական դրոշմ, որ Հայ աղգի սրտում անջնջելի պէտք է մնայ յաւիտեան։ Լուսաւորիչ այնքան մեծ հեղինակութիւն է տուացել Հայ ժողովրդի աչքում, որ իրանց «Լուսաւորչայ աղգ» են անուանում, ի՞նչ է նորա այսպիսի մեծ հեղինակութեան պատճառը, ահա մի հարց, որ պէտք է պարզէ մեր եկեղեցւոյ ամենահիմնական ակղբունքներից մէկը։

Ինչպէս վերև յիշեցինք, Լուսաւորիչ մի նոր հաստատութեան հիմնագիր լինելով, պէտք է մի որոշ և վսեմ գաղափար ունենար այն հաստատութեան մասին, որի տուած ճշմարտութիւնների համար նա պատրաստ էր ամեն բանից զրկուել, ինչպէս և ցոյց տուեց։ Լուսաւորիչ իւր գաւանած ճշմարտութիւնների համար տասն ու հինգ տարի տանջուելուց յետոյ, բոլորովին զարմանալի կերպով երևան է գալիս կենդանի հաւատակը, վաթսուն ու վեց օր այժմ նա քարոզում է բազմաթիւ ժողովրդեան, որոնց սրտերը կակղել են նորա քարոզութիւնների շնորհիւ, ինչպէս մոմը կրակի առաջ։ Եթէ հեթանոսութիւնը իւր ներկայացուցիչ Թագաւորի առաջնորդութեամբ պատերազմ էր վարում քրիստոնէութեան և նորա խոստովանողի դէմ, վերջինս յաղթեց, չնայելով իւր նիւթական զօրութեան ոչնչութեանը։ Զարմանալի իրողութիւն, ինչպէս պէտք է բացատրել այդ հանդամանքը։ Փոխանակ պատ-

մական հիմնաւոր կամ անհիմն ենթադրութիւնների մէջ ընկնելու, որ մեր նիւթից դուրս է, աւելի լաւ է Լուսաւորչի կարծիքն իմանանք, քանի որ դա Լուսաւորչի հայեացքների մի մասն է կազմում: «Եւ իմ նայեցեալ տեսի բայեալ զհաստատութիւն երկնից . . . Եւ լոյս հասեալ վերուստ ի վայր մինչև յերիվեր հասանէր», ասում է Լուսաւորիչ: ուրեմն նորա գաղափարով Հայաստանեայց եկեղեցին Հայ ազգի համար մի երկնային պարգև է, երկնային, որովհետև լոյսը երկնքից է իջնում, որովհետև այդ եկեղեցւոյ կազմակերպը կազմուում է Աստուածային զօրութեամբ, Աստուածորդւոյ երկիր իջնելով: Քրիստոնէութիւնը երկնքից գալով իւր հետ լոյս պիտի բերէր «և ընդ լուսոյն զօրք անչափք լուսեղէնք երկրեւեանք», քրիստոնէութեան շնորհիւ մեր երկիրը երկնային էակների բնակավայր պիտի դառնար: Ի՞նչ վսեմ, որքան բարձր և աստուածային գաղափար: Քրիստոնէութիւնը իւր հետ լոյս բերելով՝ խաւարին թշնամի պիտի հանդիսանար և ուրեմն ամեն կերպ պէտք է աշխատէր ոչնչացնել նորան: Եթէ Հայաստանեայց եկեղեցին ձգտում է իւր հօտին «յանգիտութենէ ի գիտութիւն» առաջնորդել, եթէ նորա նպատակն է խաւարայինը ոչնչացնել և նորա տեղ լուսաւորը դնել, ապա ուրեմն հասկանալի է, որ նա իւր նպատակին հասնելու համար զանազան միջոցներ պէտք է գործ դնէր, նա պէտք է պատրաստեր իւր հօտը լոյսն ընդունելու համար: Եւ Լուսաւորիչ իւր գործունէութեամբ մեզ ցոյց տուեց այդ միջոցներից ամենագերազանցելին՝ դաստիարակութիւնը: Լուսաւորչի քարոզած դաստիարակութիւնը զուտ քրիստոնէական է. «Պիտոյ է մեզ դաստիարակութիւն աւետարանին» բացատրում է «Յաճախապատում»ի մէջ: Ազգային տեսակէտից նայելով՝ քրիստոնէական դաստիարակութիւնն էլ շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետև փչացած կամ անբարոյականացած մի ազգ երբէք երկար գոյութիւն ունենալ չի կարող, այն ինչ քրիստոնէութիւնը իւր քարոզած ճշմարիտ բարոյականութիւնը տարածելով ժողովրդի մէջ, երկնային յաւիտենականութեան հասցնելուց զատ, երկրային յա-

բառեւութեանն էլ նպաստած կլինէր: Ինչպէս վերեւ ասացինք, Լուսաւորիչ աչքի առաջ ունէր քրիստոնէական դաստիարակութիւնը եւ նա իւր գործունէութեամբ այդ բանը պարզեց. Լուսաւորիչ քրիստոնէական դաստիարակութեան միջնորդութեամբ պէտք է արմատախիլ անէր չարութեան սերմերը, Լուսաւորիչ քրիստոնէական դաստիարակութեան շնորհիւ պէտք է բաց անէր մեր աչքերը խաւարի անդունդներից խուսափելու համար, Լուսաւորիչ այդ դաստիարակութեամբ խաւարի արքանեակներին լուսաւորութեան առաջնորդներ պիտի դարձնէր, դպրոցներում պիտի պատրաստէր խաւարի դէմ մարտնչող հոգեւոր զինուորներին: Բայց Լուսաւորչի քարոզած զուտ քրիստոնէական դաստիարակութիւնը շուտով ազգային դաստիարակութեան վերածուեցաւ, քրիստոնէական դաստիարակութիւնը ազգային դաստիարակութեան հիմք դարձաւ եւ այդ տեսակէտից նայելով իրաւամբ Լուսաւորչին Հայոց ազգային դաստիարակութեան հիմնադիր պիտի համարենք. Լուսաւորիչ առաջին անգամ Հայ եկեղեցւոյ հետ կապեց Հայ դպրոցի գաղափարը, Լուսաւորիչ առաջին անգամ Եկեղեցւոյ յառաջադիմութեան մէջ տեսաւ եւ նորա հօտի՝ Հայազգի յառաջադիմութիւնը: Լուսաւորչի գաղափարով Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնական սկզբունքներից մէկն է քրիստոնէական դաստիարակութիւն տալ իւր հօտին. եւ որովհետեւ այդ քրիստոնէական դաստիարակութիւնը Լուսաւորչից, համարեա անմիջապէս յետոյ, միացաւ ազգային դաստիարակութեան հետ եւ եւ նորա հիմքը կազմեց, ապա ուրեմն կարող ենք ասել, եւ ճշմարիտ այդպէս է, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ ամենահիմնական սկզբունքներից մէկն է ազգային դաստիարակութիւն տալ Հայ ազգին: Այո, Հայաստանեայց եկեղեցւոյ հովանաւորութեան տակ պիտի դաստիարակուէր Հայ սերունդը եւ դաստիարակութեան շնորհիւ լուսաւորութեան ճառագայթները Հայ ընտանիքի խորքերը պիտի թափանցէին. ահա ազգային եկեղեցւոյ անխախտելի սկզբունքներից մէկը: Եւ յիրաւի մեր պատմութիւնը ցոյց է տալիս, թէ եկեղեցին հաւատարիմ է

մնացել իբր ուղղութեանը և մինչև այժմ էլ քրիստոնէականը ազգային դաստիարակութիւնից անբաժան է համարում: Ճշմարիտ է, պատմական թշուառ հանգամանքները արգելք են եղել մեր եկեղեցուն ազգային դաստիարակութիւնը ժողովրդի մէջ լաւ ընդհանրացնելու, բայց գաղափարը իբր սրբութիւնը միշտ պահպանել է, մեր հայրերը միշտ հաւատացել են, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ շնորհիւ սև այծերը լուսակիզն բըրդով ոչխարների պիտի վախուէին և թէ նոքա հովանու տակ «ճնեալ գառինքն ամենայն լուսակիզն» պիտի լինէին:

Եթէ մենք Հայաստանեայց եկեղեցին ազգային հիմնարկութիւն ենք համարում, եթէ մեր գոյութիւնը, մեր փրկութիւնը եկեղեցւոյ մէջ ենք տեսնում, դորա պատճառն այն է, որ մեր եկեղեցին էլ վախճատարձաբար իբրև կենդանի մարմին իբր յարատևութիւնը հօտի յարատևութեան մէջ է տեսնում: Այսպէս ուրեմն Հայոց ազգ և Հայաստանեայց եկեղեցի, ազգային դաստիարակութիւն և եկեղեցւոյ դաստիարակութիւն դարերի ընթացքում մի անբաժանելի միութիւն են կազմել. այդ միութիւնը այնքան սերտ էր, որ ազգային շահերը միացան Հայաստանեայց եկեղեցւոյ շահերի հետ և ընդհակառակ, եկեղեցւոյ վտանգը Հայ ազգինն էր և ընդհակառակ: Հայոց լեզուն Հայոց եկեղեցւոյ մէջ կենդանի մնաց, Հայոց կեանքը Հայոց եկեղեցւոյ մէջ զարգացաւ, Հայոց պատմութիւնը Հայոց եկեղեցւոյ պատմութիւն դարձաւ: Հայոց եկեղեցի անունը մեր աստծների համար մի մեծ վատ կարող է լինել: Լուսաւորիչ քրիստոնէական ընդհանուր մի գաղափար յայտնեց. բայց Հայոց պատմական կեանքը այդ գաղափարը բոլորովին իւրացրեց, ազգայնացրեց: Անշուշտ այդ իրողութիւնը ունի իւր պատմական հիմունքները, կրկնում ենք, այդ երևոյթը ունի իւր որոշ պատճառները, որոնց շնորհիւ մեր եկեղեցին կարծես մի բացառիկ ճանապարհ է բռնել միւսների նկատմամբ: Թէ ճշմարիտ Լուսաւորչի արտայայտած գաղափարը նորանից յետոյ բոլորովին ազգային կերպարանք ստացաւ, մեզ համար մեծ ապացոյց կարող է լինել նորա յաջորդների գործունէութիւնը. Մեծն Ներ-

սէս այդ գաղափարի մարմնացման սկիզբն է, իսկ Ս. Սահակ իսկական մարմնացումն: Հինգերորդ դարու յեղափոխութեան սկիզբը Մեծն Ներսէս դրեց. նա նկատելով Հայ—ազգի քայքայումը, իւր մեծ բարեհոգումներով կամեցաւ մի նոր կազմակերպութիւն տալ Հայոց ազգին. եթէ Ս. Ներսէս Մեծին անունն ժառանգեց, ոչ թէ միայն մեծ եկեղեցական, այլ և ազգային մեծ գործիչ, մեծ հայրենասէր լինելու համար: Մեծն Ներսէսի օրով Հայոց կաթուղիկոսների հեռաւորութեանը վերջ տրուեցաւ, ապագայում վէճերի առաջն առնելու համար: Մեծն Ներսէս Հայոց անկախութեան մեծ պաշտպանն էր. ոչ աշխատեց նախարարների և թագաւորի մէջ համերաշխութիւն հաստատել, երկիրը ներքին երկպառակութիւնից ազատելու համար, ոչ մերժեալ ժառանգին նստեցրեց հօր գահի վերայ: Իսկ նորա արժանաւոր որդին մի քայլ էլ հօրից առաջ անցաւ. ոսկեդարը նոյն գաղափարի արտայայտութիւնն էր: Երկու մեծ հանճարները՝ Ս. Սահակ— Մեսրոպ իրենց բոլոր աշակերտներով և հետևողներով այդ գաղափարի ճնռնդ էին: Մի փոքր այստեղ կանգ առնենք, մեր ասածը աւելի պարզելու համար. թէ ճշմարիտ մեր եկեղեցին ազգային հաստատութիւն է եղել, նա հաւասարապէս եւ ազգայնութեան և քրիստոնէութեան պաշտպան է եղել, այդ ապացուցանում է մեր ամբողջ պատմութիւնը և մասնաւորապէս աւելի որոշ հինգերորդ դարու գործիչների կեանքը: Ս. Սահակ—Մեսրովբ իրենց բոլոր կողմնակիցներով Հայ ազգի ճշմարիտ մշակներն էին, Ս. Սահակեաններն իրենց գործունէութեամբ ճշմարիտ հայրենասէրներ և ազգային կեանքի յեղափոխիչներ հանդիսացան. նոքա տասնեակ տարիներ անձնատուր եղան լուսաւորութեան գործին: Ս. Մեսրովբ իւր մեծ գիտութով, Ս. Սահակ իւր մեծ օժանդակութեամբ և գործունէութեամբ ամբողջ ներունդ պատրաստեցին, մի նոր կեանք տուին Հային, ոսկեդար ստեղծեցին և ուրիշ կերպ անել չէին կարող, քանի որ նորա Հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնեաներ էին, իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնեայ լինել, նշանակում է և

Հայ ազգութեան ճշմարիտ անդամ և մշակ լինիլ։ Անշուշտ մենք Ս. Սահակ—Մեսրովբին, Խորենացուն, Եղիշէին, Փարպեցուն և այլ գոյա նմաններին ազգային գործիչներ կհամարենք. ինչու՞, որովհետև նոքա Հային լեզու տուին, պատմութիւն տուին, մի նոր կեանք, եռանդ, ոգևորութիւն ներշնչեցին ժողովրդի մէջ։ Այլ ևս չենք յիշում Ս. Սահակի քաղաքական գործունէութիւնը, որ մեր ատածների համար մի անհերքելի փաստ կարող է լինել։ Եթէ նոյն իսկ ընդունենք, թէ Ս. Սահակեանների գործունէութեան նպատակը եկեղեցւոյ ապահովութիւնն էր, էլի շատ հեշտութեամբ կարող ենք ապացուցանել մեր եկեղեցւոյ և ազգի այն սերտ կապակցութիւնն, որի մասին խօսել ենք մենք. քանի որ եկեղեցւոյ ապահովութեամբ ազգի գոյութիւնն է ապահովանում, և եկեղեցւոյ բարձրութեամբ ազգն է բարձրանում, եկեղեցւոյ և ազգի լեզուն նոյնն են դառնում, իսկ լեզուն ազգութեան ամենատրոշ յատկանիշներից է։ Եթէ պատմական փաստերի վերայ հիմնուելով ցոյց տանք, թէ հինգերորդ դարու յեղափոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր Հայոյ համար և այդ անհրաժեշտութիւնը կատարուեցաւ եկեղեցւոյ պաշտօնեաների ձեռքով, այն ժամանակ աւելի հաստատութեամբ կարող ենք մեր ասածը պաշտպանել։ Եթէ Հայ ազգի համար օրինակ անհրաժեշտութիւն էր գիր ունենալ, և անհրաժեշտութիւնը լցուցանում է եկեղեցին, ուրեմն պարզ է, թէ արքան սերտ կապակցութիւն ունին միմեանց հետ, որ մէկի կարիքը միւսինն է, որ մէկի պահանջը միւսն է կատարում։

Միանգամ յիշեցինք, թէ Ս. Սահակեանների գործունէութիւնը Լուսաւորչի գաղափարների մարմնացումն է, դորան ապացոյց է բայի նոցա գործունէութիւնից և Ս. Սահակի տեսիլը, որի մէջ նորից արտայայտուած են Լուսաւորչի գաղափարները, միայն աւելի պարզ, աւելի ազգային կերպարանքով։ Ոչ միայն Ս. Սահակ իւր գործակիցներով, այլ և մեր բոլոր Հայ հայրապետները, հոգևորականութիւնը, իրենց կեանքն ու գործունէութիւնը Հայ ազգին են նուիրել, հաւատալով միանգամայն, որ

կատարում են Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնէի իսկական կոչումը։ Եւ այդ ուղղութեան հայրը Ս. Լուսաւորիչն եղաւ։ Լուսաւորութեան գործը նա կապեց եկեղեցւոյ հետ, նա մեզ ճշմարիտ յառաջադիմութեան ճանապարհը ցոյց տուեց, եկեղեցւոյ յառաջադիմութեան հետ կապելով և նորա հոգի յառաջադիմութիւնը։ Նա մեզ մի վսեմ և աստուածային գաղափար յայտնեց, խրախուսեց պատերազմել չարութեան դէմ՝ յուսադրելով, թէ վերջ ի վերջոյ յաղթութիւնը մեր կողմը պիտի լինի, եթէ ճշմարտութեան ճանապարհը կբռնենք։ Լուսաւորչի տուած ուղղութեանը մեր եկեղեցին հաւատարիմ է մնացել մինչև այժմ, այդ ուղղութիւնն է պատճառ, որ մեր եկեղեցին իւր շահերը ազգի շահերից երբէք չէ բաժանել, նորա ուրախութիւններն ու վշտերը, յաջողութիւններն ու դժբաղդութիւնները իւրն է համարել։

Այդ ուղղութիւնն է պատճառ, որ Հայաստանեայց եկեղեցի գաղափարը այնպէս սերտ կապուած է Հայ ազգութիւն գաղափարի հետ, որ Հայաստանեայց եկեղեցւոյ կազմակերպութիւն, Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութիւն—Հայ ազգի վերակենդանութիւն, Հայ ազգի փառք է նշանակում։ Մենք հաւատում ենք, որ երբէք չի գալ այն օրը, երբ մեր եկեղեցին իւր շահերը բաժանէ Հայ ազգի շահերից, երբ Հայ հոգևորականութիւնը առանձնանայ և բոլորովին առանձին մնայիմն կազմէ, որովհետև Հայաստանեայց եկեղեցին Հայոց եկեղեցի է, ազգային հաստատութիւն է։

Այդ ազգային նոր հաստատութեան կեդրոնը Հայի հայրենիքի կեդրոնը պիտի լինէր, նոր հաստատութեան սիրտը Հայի հայրենիքի սիրտը պիտի լինէր, Արարատն էր Հայի ծագմանն, զարգացման ասպարէզը, Արարատումն էր Հայը կեանք, կազմակերպութիւն ստացել, Արարատն էր եղել Հայի որորանն ու մայր հայրենիքը, այժմ երբ քրիստոնէութեան շնորհիւ մենք մի նոր ազգ պիտի դառնայինք, մի նոր կենդանութիւն պիտի ստանայինք, Արարատեան աշխարհն կեդրոնում՝ մի փոքրիկ տարածութիւն Հայի իսկական հայրենիքը պիտի դառնար, ցրուած Հայերը այն-

տեղից պէտք է սահնային կենդանութեան ամեն-մի նոր գործ, այնտեղից, որպէս Հայութեան սրտից, ամբողջ մարմինը սընունդ, արիւն պիտի ստանար։ Հայի հայրենեաց այդ վսեմ տարածութեան վերայ պիտի իջնէր Մխածին Աստի անկի ուռը ձեռքին՝ աստուածային իւր բոլոր զօրութեամբ հաստատելու մի շինութիւն, որի հիմքը անսասանութիւնն է, նիւթը հոգի, լոյս, ամպ։

Այդ շինութեան կատարին պիտի հաստատուէր « ԱԹՈՌ ԱՍՏՈՒԱԾԱԿԵՐՏ, աքանչելի, հրեղէն, ղորով վարեալ լոյսն համատարած »։ Այո՛, Հայաստանեայց հայրապետութեան հիմքը հայրենեաց հոգի վերայ է դրուած, իսկ նորա հաստատողը Մխածին Աստի է։ Այդ աթոռը իւր հրով պիտի այրէր, ոչնչացներ ազգութիւնները, իսկ լուսով խաւարը, աթոռի վերայ հաստատուած է լուսաւոր խաչը, այդ աթոռը խաչի՝ խաչեցեալի հովանաւորութեան տակ է, խաչի զօրութեամբ շինութեան տակից յորդաւատ աղբիւր է բղխում մնաքրելու մարդկանց կեղտերը, աղբիւր մկրտութեան, որի մէջ մկրտուողները լուսոյ արքանեակներ պիտի դառնային։ Եւ այս ամենը Լուսաւորիչ մեզ տուեց. նա մեզ ցոյց տուեց, թէ պէտք չէ վախենալ խաւարից և խաւարայիններից, պէտք չէ վախենալ պատերազմ գուրս գալու նոցա դէմ, որովհետև մենք կ՚յաղթենք անպատճառ, եթէ մեր գէնքը լոյսը կլինի։ Ձէ՞ որ խաւարը չքանում է միշտ լուսոյ ներկայութեամբ։ Լուսաւորիչ յայտնեց մեզ, թէ ոչինչ վնասել չէ կարող Հայաստանեայց եկեղեցւոյ հօտին, եթէ հաւատարիմ կմնայ իւր եկեղեցուն և նորա սուրբ ձգտումներին ճշմարիտ հետևող կլինի։ Լուսաւորիչ գուշակեց, ժամանակաւոր գայլերը կոչնչանան, հրեղէն հեղեղը կայրէ նրանց, իսկ հաւատարիմ գառները թև առնելով՝ կրկինք կթռչեն, դէպի բարձրն ու վսեմը։ Բայց մենք յանկալի բարձրութեան չհասանք, որովհետև պատմական թշուառ հանգամանքները արգելք եղան, այդ հանգամանքներին նայելով մենք վատուց պէտք է անհետացած լինէինք աշխարհի երեսից, այն ինչ մենք պահպանում ենք դեռ և մեր գոյութիւնը և յոյս ունինք, որ գալու է մի օր, երբ նորից

հոգեպէս կենդանութիւն պիտի առանձնայ: Անշուշտ Պարսկական, Արաբական, Մողոլական հոսանքներից չպէտք է կարողանայինք ազատուիլ, եթէ մեր եկեղեցւոյ վրկարար ազդեցութեան տակ չլինէինք: Հայը կորցնում է իւր լեզուն բայց հաւատարիմ մնալով իւր եկեղեցուն չէ կորցնում իւր ազգութիւնն և մենք յուսով ենք մնում, թէ նա մի օր նորից ձեռք կբերէ իւր կորցրածը: Հայոց եկեղեցին ամենասերտ կապերով միանալով հայ ազգութեան հետ, նորա գոյութեան հետ կապուեցաւ և հայ ազգի գոյութիւնը, նորա յաւիտենականութեան հետ կապուեցաւ և հայ ազգը: Այդ է պատճառ, որ մենք այնպիսի կասկածանքով ենք նայում հայոց եկեղեցւոյ ծոցից դուրս եկած հայերի վերայ, մենք կասկածում ենք, որ գժբախտ հանգամանքներում գուցէ չկարողանան իրանց ազգային գոյութիւնը պահպանել և կորչեն: Բայց Հայաստանեայց եկեղեցին մի մարմին լինելով, որոշ կազմակերպութիւն ունենալով, աւելի հաստատութեամբ կարող է դուրին դիմանալ, և մենք հաւատում ենք, որ նա անբնկճելի պէտք է մնայ, ինչպէս իւր մարգարէական աչքերով նախատեսել է Հայաստանեայց եկեղեցւոյ Լուսաւորիչը:

Հայերիս մէջ միշտ եղել է կարծիս փայլուն ապագայի գաղափարը, մենք մի առանձին քնքշութեամբ ենք նայել այդ ապագայի վերայ: Այդ յոյսը Հայի մխիթարիչն ու սիրելին է եղել, եթէ նա անցեալը սխրութեան քօղով ծածկուած է տեսել, եթէ ներկան անտանելի է համարել, այդ բոլորը ոչնչացել են մեծ ապագայի յուսով: Եւ այդ յոյսը ներշնչել են մեր մէջ Ս. Լուսաւորիչը, Ս. Սահակ և այլ գոյա նման հայրերը: Եւ մենք հաւատում ենք, թէ ազգային եկեղեցին պիտի պահպանէ և ազգի գոյութիւնը, հաւատում ենք, թէ եկեղեցւոյ միջոցով աստուածութեամբ պիտի կատարուի Հայի մտաւոր վերածնութիւնը, ս. սեղանից պիտի ծագին Հայի կենդանացուցիչ ճառագայթները: Մենք մոլեռանդութեամբ չենք գոչում, թէ՝ «Արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չկայ փրկութիւն», բայց արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չկայ հայութիւն և փրկու-

թիւնը մի փոքր կասկածելի է, վտանգաւոր է։ Ի՞նչու աւելի ապահով ճանապարհը չբռնենք, ինչո՞ւ վահան վերարկուի տակ չանենք այն ամենը, որ անկեալին բարձրացնում է, մեռածին վերակենդանութիւն է տալիս։

Այս համառօտ տեսութեամբ մենք աշխատեցինք Հայ ազգի և եկեղեցւոյ յարաբերութիւնը ցոյց տալ աւելի անցեալի նկատմամբ, բայց անշուշտ նոյն գուցէ և աւելի մեծ դեր կարող է խաղալ ներկայումս և ապագայում, եթէ նոր Հայերս էլ նոյն աչքով կնայենք եկեղեցւոյ վերայ, ինչպէս և մեր նախնիք. անկարող ենք այժմ ներկայի նկատմամբ ցոյց տալ այն բոլոր հանգամանքները և միջոցները, որ Հայաստանեայց եկեղեցին իւր պաշտօնեաների միջնորդութեամբ կամ նոցա առաջնորդութեամբ կարող է իրագործիչ հանդիսանալ մեր վայրիվայած յոյսերին, բայց մենք չենք թերահաւատում այդ բանի մէջ։ Քրիստոնէական ճշմարիտ բարոյականութիւնը միացած ազգային դաստիարակութեան հետ, ղօրաւոր գրիչը միացած քարոզչական—առաքելական սրբազան պաշտօնի հետ, կանոնաւոր կազմակերպութիւն միացած պարտքի և իրաւունքի ճշմարիտ հասկացողութեան հետ, ճշմարիտ հայրենասիրութիւն միացած անպղտոզ կամքի հետ, ահա յաւիտենականութեան ճանապարհը։

Մեր համառօտ տեսութիւնը լրացնելու համար չպէտք է մոռանանք և մի կէտ, որ մեր եկեղեցւոյ գլխաւոր յատկանիշներից մէկն է։ Նուաստագոյն եկեղեցւոյ գաղափարը բացատրելուց յետոյ, քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը աւանդելուց յետոյ, զգուշացրեց իւր հօտին չշեղուելու ճշմարտութեան ճանապարհից, չխառնուել երբէք դատանաբանական անօգուտ վէճերի մէջ, անօգուտ՝ «Զի մեծութիւնք անքննելիք են, անօրիշդն էութիւնն, ի վեր քան զիմանալիս յանուանմանութեանն և յանբաւութեանն»։ Ի՞նչու ի զուր ժամանակ կորցրնել այնպիսի խնդիրների համար, քանի որ դրական ոչինչ չպէտք է առանանք։ «Ա՛յսպէս ընկալաք զՀաւատացն բան և դուք այսպէս հաւատացէք յամենասուրբ երրորդութիւնն»,

ասում է Լուսաւորիչ։ Նա իւր հօրից պահանջում է քրիստոնէական կրօնի երեք սիւները՝ հաւատ, յոյս, սէր, մանաւանդ հաւատ, որովհետև «Ճշմարիտ հաւատ լոյս է աչաց մտացն»։ . . . Ըստ աճման հաւատոյ ի կատարումն առաքինութեան եկեցուք», բացատրում է Լուսաւորիչ։ Այն էակը, որ աննման, անհամեմատ, անպատում, անսահման, անհաս և անբաւ է, «հաւատալ տեսանի և իմանի։ Վասն այսորիկ լուռ ցուք ի գաւառիկ և ի վայրապար քննութենէ և ղհետ երթիցուք խրատուց գրոյ սրբոյ հնոց և նորոյն»։ Լուսաւորչի գաղափարով այդպիսի քննութիւնները, վիճաբանութիւնները մոլորութեան կարող են հասցնել- «Եւ մի անկանիլ ի բազմախոյզ խնդիրս, որ վրիպեցուցանեն ի ուղիգ հաւատոյ»։ Լուսաւորիչ իւր քարոզած վարդապետութիւնը ճշմարտութիւն համարելով պատուիրում է իւր հօրին չշեղուիլ իւր առած ճշմարտութիւններից։ «Եւ մի խոտորիք ի կարգաց իմաստութեան յաջ և յահեակ»։ Եթէ մենք պարծենում ենք, թէ մեր եկեղեցին ուղղափառ է, մոլորութիւնների մէջ չէ ընկել, եթէ մենք պարծենում ենք, թէ մեր եկեղեցին պահպանել է առաքելական գաւրաւ գոյնն ու կերպարանքը, բոլորը այդ ուղղութեան շնորհիւն է։ Մեր եկեղեցւոյ սուրբ հայրերը ճշմարիտ հետևող հանգիւանալով իրանց նախահայրապետներին, աշխատեցին սրբան կարելի է խոյս տալ աւելորդ վէճերից և իրանց այժն ու ժամանակը հօրի փրկութեանն ու երջանկութեանն նուիրեցին։ Հենց Լուսաւորչից սկսած մեր բոլոր հայրապետները աշխատել են իրենց հօրի քրիստոնէական դաստիարակիչներ դառնալ, աշխատել են ժողովրդին հայր հանդիսանալ, պաշտպանել նորան ազիսութիւնից և արտաքին բռնութիւններից և միշտ խոյս են տուել դատանաբանական աւելորդ վիճաբանութիւններից։ Մեր Հայ հայրապետները իրանց գործունէութեամբ նուիրուել են ազգին և իրենց ուղղութեամբ կարծես բոլորն էլ լուսեւոյն կրկնել են Լուսաւորչի խօսքերը՝ «Իսկ մեք վարդապետութիւն» և այդպիսով պահպանել են մեր եկեղեցւոյ անարատութիւնը։

Ահա Լուսաւորչի մեծութեան, հեղինակութեան պատճառը

Հայ ազգի աչքում, կարծում ենք այժմ բաւական պարզաւած պէտք է լինի, թէ ո՛վ էր Լուսաւորիչ և ինչո՛ւ Լուսաւորիչ է կոչւում։ Հասկանալի է, որ Հայ ժողովուրդը իւր մեծ բարերարի, իւր Լուսաւորչի յիշատակը անջինջ պէտք է պահէր իւր սրտում, պիտի յաւերժացնէր նորա անունը։ Եւ յիրաւի մեր ժողովուրդը գեղեցիկ աւանդութիւններով զարդարեց նորա յիշատակը. Լուսաւորիչ կանգնած է, ոսկէ աթոռի վերայ նըստած Քրիստոսի մօտ երկնքում, ժողովուրդը իւր երևակայութեամբ Լուսաւորչի անունով միշտաւոր կանթեղներ է կախել, Հայաստանի կաթնաղբիւրները Լուսաւորչին է նուիրել, Լուսաւորչի ոտքերի մէջ լողանալով աղաւնում է իւր ցաւերից։ Ոչ միայն Լուսաւորչի կեանքն ու գործունէութիւնը, այլ և նոյն իսկ մահը զարդարուած է գեղեցիկ աւանդութիւններով. հովիւները Լուսաւորչին գտնում են մեռած «կանգուն ի վերայ ոտից իւրոց»։ Լուսաւորչի նման մարդը միշտ կենդանի, միշտ կանգուն պէտք է մնայ, քանի որ Հայ եկեղեցի, Հայ ազգ կայ։

Գ. Ս.

ՔՐԻՍՏՈՆԷԻ ՄԻԱՑՆՈՒԹԻՒՆԸ.

«Եւ զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդիս է». (Յովհ. ԺԶ. 31)։

Երկու տեսակ միայնութիւն կայ, եղբարք, — միայնութիւն տեսանելի և անտեսանելի։ Երբ մեզ ոչ ոք չէ տեսնում, չէ լսում. մեզ ձեռք չէ տալիս,—այսում ենք թէ միայն ենք։ Բայց իսկական միայնութիւնը ամէն ժամանակ հէնց այդ տեսակ միայնութիւնը չէ։ Հինաորսը իրան միայնակ չէ զգում, երբ գիշերը ծովի ահագին տարածութեան վրայ է անցկացնում՝ ոչ մի այլ

ձայն չլսելով բայց ալիքների միանման ծփումը և հոգմի շաչիւնը, որոց մարգկային ոչ մի ձայն կարող չէ իանգարել։ Նա— ձկնորսը,—այդ ժամանակ մոռանում է տանը հանգիստ քնած իւր ընտանեաց մասին, իւր անհոգ զաւակաց մասին, որոց համար նա աշխատում է։ Եւ առ նոսա ունեցած սիրով լեցվում է նրա սիրտը,—նա միայնակ չէ ուրեմն։ Իրան միայնակ չէ զգում նոյնպէս և պահնակ—գինուորը, որ զէն ի ձեռին, ընդհանուր լռութիւնում, կանգնած է հեռաւոր պահակատեղում։ Որովհետև նա ընդունել է, որ այդպիսով պահպանում է դրօշակի պատիւը և իւր զինակիցների անդորրութիւնը։

Միայնակ չէ նմանապէս և այն աշխատասէր կինը, որ իւր խրճիթում, վառարիկ լամբարի լուսով, անդադրում աշխատանքով զարթուում է ձեռքի ասեղովը, լաւ գիտնալով, որ մինչև արշալուսի բացուիլը աւարտելով գործը, նրանով հեռևեալ օրուայ կերակուր կըմնատակարարէ իւր սիրելի զաւակներին։

Ո՛չ, եղբայրք, ով որ սիրում է, նա միայնակ չէ։ Ընդհակառակը՝ կարելի է մեծ բազմութեամբ շրջապատուած լինել, և իրան միայնակ զգալ աւելի քան թէ անապատում։ Կան մարդիկ, որոց հպելը կամ մերձենալը՝ ձեր հոգու համակրական ոչ մի լարն էլ չէ շարժում։ Նրանց ձեռքը սեղմում է ձերը, բայց այդ անտարբեր ընդգրկումը. ձեր սրտում ոչ մի զգացմունք չէ զարթնացնում։ Դուք հանդիպում եք այդպիսի մարդկանց հայեացքին, որին գուցէ մի քաղաքավար ժպիտով կը պատասխանէք, սակայն ձեր ժպիտը անկեղծ և խօրին բարեկամութեանը եչքէք չէ ջերմանում։ Այսպիսի նեղքին միայնութիւն, մեծ բազմութիւնում, իւրաքանչիւր ոք մեզանից, երբ և իցէ զգացած կը լինի անշուշտ։

Այսպէս՝ գերեզմանից չեա դառնալիս՝ ուր դուք թողեցիք ձեր սրտի և կեանքի մի մասը, ամբոխի ամէն տեսակ ձայներն ու շարժուձևները՝ ձեզ թմբում են դադարիչ, աւելորդ և անտանելի։ Ամէն ոք գիտէ անտարակոյս, թէ ինչպէս սեղմվում է իւր սիրտը, երբ իրան միայնակ է զգում։ Այս պատահում է մինչև անգամ աշխարհի և ունայնութեանց անձնատուր եղած

և միմիայն նրանցմով յատկացուած մարդկանց ևս: Եւ եթէ մենք կարողանայինք այդպիսի մարդկանց մէնի ներքը թաւալանել, անշուշտ, և յաճախակի, մենք այնտեղ կը գտնէինք մի ամայի սիրտ և բարոյական զարհուրելի միայնութիւն:

Արդեօք հարկաւո՞ր է ասել թէ երկու միայնութիւններից ո՞րն է ծանր՝ արտաքինը թէ ներքինը: Արտի միայնութիւնը, անտարակոյս, միայնութիւններից ամենաատրամաչելին է: Լայնածաւալ սիեզերքի մէջ զգալ իրան միայնակ, մուռացուած, գիտնալով որ դուք ոչ ոքի համար յարգ և արժէք չունիք, որ ոչ ոք ձեր վիճակով չէ հետաքրքրւում,—արդեօք սրանից էլ ապեռալի դրութիւն կարող է լինել մի թէ: Ի վերայ այսր ամենայնի, մենք գիտենք որ կայ մարդկային մի դասակարգ, որ սիրով ենթարկուած է իրան այդ դրութեանը,—մի քանի եռասէր մարդկանց համար միայնութիւնը դժբաղդութիւն չէ: Այդպիսի մարդկանց համար միայնութիւնը, ընդհակառակը, մի տեսակ զմայլելի վիճակ է: Մարդկանց հետ ոչ մի յարաբերութիւն չունենալ, ուսումնասիրել այն գաղաթը, որ ուրիշների համար անմատչելի է և այնտեղ հպարտութեամբ բազմել,—այդ մարդկանց համար շատ գրաւիչ բան է: Այդ տեսակ մարդը, ես հաւատացած եմ, աշխարհի մէջ ապրելի շուտ է հարթում իրան ճանապարհը: Ոչ մի համակրութիւն կարող չէ նրա ընթացքը խափանել, նա գրականութեան կը մղուի իբր նպատակի քամակից,—լինի այդ նպատակը փաո՞ք կամ հարստութիւն: Նա ոտնատակ կանի թէ հակառակորդներին և թէ բարեկամներին, նա կը շպրտէ և դէն կը ձգէ ամէն մի խոչընդոտ ամէն ինչ, որ սպառնում է մի վայրկեան կասեցնել նրա քայլերը:—Նման այն վիրաբոյժին, որ առանց մարանմանի, կտրատում է ցնցուղ կենդանի գործարանը, այդ տեսակ մարդը անկատարապէս կանի իր առաջը՝ կը հասնի իր նպատակին, որոյ համար ոչ մի միջոց չէ զանց առնում: Եւ եթէ նա յաջողութիւն գտաւ,—այն ժամանակ այդպիսեաց համար կասեն թէ՝ «նա մեծ մարդ է»: Այսպէս է եսականութեան մեծութիւնը, այսպէս է գժոխքի մեծութիւնը:

Աստուածաշունչը, եղբայրք, ներկայացնում է մեզ Յիսուսի Քրիստոսի մի ուրիշ տեսակ մեծութիւնը, — մեծութիւն անանուանական և ոչ երկրային, մեծութիւն որ ազդում է սէր և պահանջում է սէր։ Եւ որովհետև Քրիստոս մարմնացեալ սէր էր, ուստի իմ այսօրուայ ընդհանրութեան համար վերցրած քնաբանս՝ մի առանձին և խորին իմաստ ունի։ «Ջիս Ղայն Ղաղ-ցո՞ւ»—լինէ միայնակ էք թողնում։

Տեսնենք այժմ, եղբայրք Յիսուսի միայնութեան պատճառները ի՞նչ էին և ի՞նչ մխիթարութիւն նա գտաւ և արտայայտեց իւր հետևեալ բառերով «Ես ձեզ Ղայն, չի Հայր ընդէս է»—Ես միայնակ չեմ, վասն զի Հայրս ինձ մօտ է։

Երբ մարդ վճռում է նուիրել իրան ճշմարտութեան կամ արդարութեան այս երկրիս վրայ՝ նա, ազան կամ անազան, միայնակ կը մնայ։ Շատ կարելի է, որ նա համակրութիւն գտնի, բայց ոչ այն ժամանակ, երբ ուժգնապէս մարտնչում է և երբ ամենամեծ հարկաւորութիւն ունի համակրութեան։

Ամէն մի ճշմարտութիւն՝ սկզբում չէ ընդունվում, այլ հայհոյութեան և տանջանայ առարկայ է դառնում իւր առաջին քարոզիչների համար։ Համաշխարհային փորձով ապացուցուած՝ այս դրութիւնը աւելի արդարանում է կրօնական ճշմարտութեան վերաբերութեամբ։ Կրօնական ճշմարտութիւնը, ըստ իւր որքութեան, մեր մեղսական ձգտումներին է շօշափում, մատնանիշ է անում մեր ոչնչութիւնը, մերկացնում է մեր սրտի զազրութիւնն ու յանցաւորութիւնը. նա ստորացնում և խորտակում է մեր գոռոզութիւնը, այդ պատճառաւ մենք պէտք է հաւատանք միշտ, որ կրօնային այդ ճշմարտութեան դէմ, վաղ թէ ուշ, մարդկային բոլոր ցանկութիւնները կը պինդուին։ Եւ այս դրութիւնը տևել է դարեր և կը տևէ մինչև աշխարհիս վերջը։ Անդիսի բոպէներ կը պատահեն, երբ կարծես թէ, ճշմարտութիւնը յաղթում է, բայց մարդկային սիրտը որովհետև միշտ մի և նոյնն է, ուստի ճշմարտութիւնը շրջապատող յայտնի հետևողների մէջ նկատվում են մի և նոյն թշնամական հակումները, մի և նոյն յան-

ցանքները և մի և նոյն ատելութիւնը լինդգէմ ճշմարտութեան հեղինակին:

Երկրագնդիս վրայ՝ յաւիտենական ճշմարտութեան և արդարութեան քարոզիչ և վկայ եղող բոլոր անձնաւորութեանց պատմութիւնը թերթելով՝ ես նրանց բոլորին էլ տեսնում եմ միայնակ, չհասկացուած և չգնահատուած:—Միայնակ էր Մովսէսը, երբ եգիպտոսում 40 տարի տանջվում էր իւր հարցատհարուած ազգի հետ. նա միայնակ էր դարձեալ՝ երբ, հակառակ իւր ցանկութեան, առաջնորդում էր այդ ազգին անապատի մէջ, նրա փառաւոր նշանակութիւնը, խորհուրդը ի գլուխ հանելու համար:—Միայնակ էր Եղիան Ա.քաաբի և Եզաբէլի ժամանակ՝ երբ սիրամած աղաղակում էր՝ «Թողին զՔեզ որդիքն Իսրայէլի. զսեղանս քո կործանեցին, և զմարգարէս քո կոտորեցին սրով, ես մնայ Ե՛ես միայնակ եմ. և խնդրեն զանձն իմ առնուլ զնա» (Գ. Թագ. ԺԹ. 10):—Միայնակ էր Եսային, երբ վշտաբեկ գոչում էր՝ «ո՛ հաւատաց լուր մերոյ»:

Միայնակ էր և Յովհաննէս Մկրտիչը Մախերի բանդում *), երբ դահիճը կտրեց նրա գլուխը՝ թագաւորական գոռոզութիւնը յաւերժացնելու համար: Միայնակ էր և Ս. Առաքեալն Պօղոս, երբ Հռոմի բանտում իւր թղթի (որ մեզ հասած է) վերջին երեսում հեռաւոր տխուր բառերը գրելիս՝ «ամէն+ը ինձ թողին նոքա»:—Ժամանակ անցնելիս յետոյ, ճշմարտութեան այս մեծ քարոզիչները անուանուեցան սուտ և փառք եւ պատիւ. և նրանց թողածը սուրբ հաւատոյ ժառանգութիւնը դարձաւ, բայց փորձութեան օրերում այդ մարդիկը միայնակ էին:

Ներկայացրէք այժմ ձեզ եղբարք, ոչ այն մեծ մարդկանց, որպիսիք էին Մովսէսը, Եղիան կամ Պօղոսը, այլ Ամենասրբին և Ամենատարաբին, որ ուզղապէս կարող է ճշմարտութեան ա-

(*) Մախեր կամ Մակոր բանդը, ըստ ասութեան Յովսեպոսի, մի գոռ և մեայլ բերդ էր, որ շինած էր Աղէքսանդր Յաննէոսը՝ իսկ մեծն Հերովդէսը՝ ամրացրած էր: Նա գտնվում էր Մեռեալ ծովի հիւսիսային կողմում, Արաբիոյ սահմանագլխում՝ անապատի ծայրում: Ծ. Թ.

նուաճուիլ, և գուք իսկոյն կը գուշակէք թէ Նա, որպէս մարդ՝ շրջելով երկրիս վրայ, միայնակ էր մարդկանց մէջ։

Նա միայնակ էր երբ Աստուածոյ փառքն էր որոնում Նրան մոգայող ժողովրդեան մէջ, երբ ծիսապաշտ ապիհին իբր Աստուածային վարդապետութիւնն էր քարոզում, երբ փարիսեցիներին հնիթարկուած ամբոխի անօրէնութիւնն ու կեղծաւորութիւնն էր կշտամբում։—Նա միայնակ էր, ո՜հ, մինչև անգամ իւր աշակերտների մէջ, որովհետև այդ աշակերտները չկարողացան իսկոյն ըմբռնել Նրա նշանակութիւնը, չկարողացան թափանցել Նրա վարդապետութեան խորքը։ Եւ շատ անգամ Նրա երկրային փառքն էին երազում։ Եւ, ի հեռուումն միմիայն մարդկային լիակատար անձնուիրութեան, կամենում էին խաւսնել Նրա հանգէպ վշտալից և արնազանգ ճանապարհը, որ տանում էր դէպ ի այն զոհը, հէնց որոյ համար Նա երկնքից երկիր իջաւ։—Նա միայնակ էր և այն խորհրդաւոր ժամում, երբ Նրա մարմինը գողաց և սիրտը արիւնով լցուեցաւ։ Նա իւր աշակերտներից քաջալերիչ խօսքեր չլսեց և Նրա վերջին ակնարկները՝ հանդիպեցան իւր աշակերտներին՝ երբ սրանք միմիս տալով ընդհանուր ամբոխի մէջն էին խառնւում,—ամբոխ, որ մինչև խաչը՝ ծիծաղի և հայհոյութեան սարսափելի ալալակներ էր արձակում։ Այսպէս էր, եղբայրք, Յիսուսի Քրիստոսի միայնութիւնը։—Եւ ինչ որ պատահեցաւ առաջնորդին, պետին, նոյնը պէտք է որ պատահէր և Նրա աշակերտներին և Նրա ամէն մի ճշմարիտ հետևողին։

Նա՝ գլուխն է, մենք՝ մարմինը, եթէ որ իսկապէս մենք անձնատուր ենք եղել Նրան, հետևում ենք Նրա սուրբ պատուիրանքներին, ապրում ենք Նրա կեանքով և, Նրա նման, որ Աստուածոյ փառքն ենք որոնում,—մեղ հետ էլ նոյնը կը լինի, ինչ որ եղաւ Նրա հետ. Քրիստոնեայք, ակնկալեցէք այս տխուր իրականութեան, ակնկալեցէք, մինչդեռ ձեզ միայնակ չէք ղգացել տակաւին երկրիս վրայ։

Սակայն ես այստեղ պէտք է մատնանիշ լինիմ այն վտանգաւոր և կեղծ ճանապարհի վրայ, ուր շատ հոգիներ մոլորւում

են: Եղբայրք, կայ միայնութիւն, որ մեղանից է ծագում: Մարդ կարող է քանդարկել իրան իւր սեպհական, անձուկ հոգևոր հոլիզոնում և քացառիկ ուշադրութեան մատնուել, կարօղ է անկախութեան և ինքնաիշխանութեան յամառութեամբ զրահաւորուել. իւր և միւս մարդկանց մէջ անջատիչ ցանկ քաշել և յետոյ թաղծիչ իւր միայնութիւնում: Ծայրայեղ յաւատհաստութիւնը՝ համոզմունն փորձութեան մէջ է ձգում մարդուս, Աչխարհի վշտերի, — որոնք ոչ ոք կարող չէ հասկանալ, — պատրաստակին տալ՝ մարդիկ ծածկվում են ինքնասիրութեան վարագոյրով և ապրում են միմիայն իրանց վշտով մնաանալով թէ իրանք ընկերներ, ժողովուրդներ ունին: Արդեօք այս է այն միայնութիւնը, առ որ հրաւիրում է մեզ Յիսուս Քրիստոս: Աչխարհի միայնութեան մէջ անշուշտ, և ոչ ամենափոքր մասն անգամ Քրիստոսական միայնութեան: Վերջինս չատաչ էր գալիս, որովհետև Քրիստոս Աստուծոյ վիճակն էր որոնում, իսկ մեր դատապարտած միայնութիւնը չատաչ է գալիս ընդհակառակը նրանից, որովհետև մարդ իւր սեպհական վիճակն է որոնում: Իսկ այդ երկու վիճակների մէջ մեծ անդունդ կայ, Եղբայրք, երկնչիմք այդ վիճակները միմեանց հետ խառնելուց, երկնչիմք, նա մանաւանդ, այն միայնութիւնից, որ չատաչ է գալիս մեր գաւառութիւնից:

Բայց այս ընդհանրացած մելամաղձութիւնը այնուամենայնիւ՝ ճշմարիտ միայնութիւն կը մնայ, եթէ որ սիրոյ, հեզ և ողորմած քրիստոնեային, ցանկանալով իւր Ուսուցչին հետևել, պատրաստում է իրան Նրա միայնութեանը մասնակցելուս համար: Հէնց այն օրը, երբ նա վճռեց հետևել իւր Ուսուցչին, նա արդէն վերանորոգում է աչխարհի և իւր մէջ եղած հասկացողութեանց և չարաբերութեանց պատուարը, որ նրան միայնացնում է: Եւ ինչպէս, որոնելով Աստուծոյ վիճակը, մարդ չզգայ իրան միայնակ աչխարհումս, ուր այդ վիճակը չէ ճանաչվում: — Ինչպէս, ապրելով չարիասիրականութեան համար, չզգայ մարդ իրան միայնակ աչխարհում, ուր ամէն աչխատանք ձգտում է դէպ ի տեսանելին, դէպ ի երկրայինն ու

մարմնականը։—Ի՞նչպէս, սիրելով սրբութիւնը, չդգայ մարդ իրան միայնակ այս բազմաթիւ սրտերում, որոյ հրապուրում և գոհացնում է միմիայն մեղսականը։ Ի՞նչպէս, աշխատելով Աստուծոյ թագաւորութեան համար, չդգայ մարդ իրան միայնակ այն մարդկանց մէջ, որոնք պատուում են միմիայն փառք, ասպարէզ, յաջողութիւն և հարստութիւն։ Աւա՜ղ, ճշմարիտ քրիստոնեան, որ մինչև իւր կեանքի վերջը Քրիստոսի համար տանջուած էր, յաճախակի և ի դէպ դառնում է իւր նիրհող եղբայրակիցներին և իրան հասկացող ոչ ոք չգտնելով, ստիպուած կըլինի կրկնել Նրա խօսքերը՝ «Ո՞չ կարացէք ժամ մի արթուն կալ ընդ ինձ»։ Եղբայրք, այս անխուսափելի միայնութիւնը՝ իրան հետ երբեմն գայթակղութիւններ էլ է բերում, որոյ վրայ խնդրեմ ուշք դարձնէք։ Տեսնենք այժմ այդ գայթագղութիւնները։ Մէն մինակ հաւատալ ճշմարտութեան և մէն մինակ յայտնել նրան, առանց Ս. եկեղեցւոյ ղեկավարութեան, մեզ համար որքան զարհուրելի փորձ է։ Այսպէս է խելքի գայթագղութիւնը։ Դրա վրայ կարող է աւելանալ նա և սրտի կարծրութիւնը։ Սիրաը համակրանք է տեսնում և նրա համար ոչ մի բան այնքան դուրեկան և ազնիւ չէ, ինչպէս մտերմութիւնը, որ սրբիշները պատում են։

Սիրոյ կարողութիւնը և մարդու ազգ կեանքը զօրանում է համակրութեամբ։ Բայց մէն մինակ սիրել Աստուծոյն և հրաւիրել դէպ ի սէրը, որ բուն կանինն հատատուն չէ մարդու իրան մէջ,—դիտէք, եղբայրք, թէ որպիսի տուիթ է յուսահատութեան։ Այն ժամանակ սիրտը ընկղմում է ինքն իրան մէջ և քայքայում վշտի ուժգին հարուածների տակ։ Ս. յայտնում խելքի և սրտի այս կրկնակի վտանգութիւնները կեանքի վրայ ազդեցութիւն չեն գործում արգելք։ Ներգործելու համար, եղբայրք, պէտք է հասկանան մեզ սրբիշները։ Այն միտքը թէ մենք մեզ վրայ նայողներ, մեզ ունկնդիրներ և վկայողներ ունինք,—մեր բնական աշխատքը կրկնապատկում է։ Ամենապուռարին, մինչև անգամ անհնարին գործերը կատարուել են մարդկանց հաւաքական այժերով։ Համակրութեան այս

հրաշալի զգացմունքը ամեն տեղ մենք զգում ենք, ուր որ կան մանկական—մաքուր և անարատ հոգիներ: Համակրութեան զօրութիւնը շատ անգամ զարթուցիչ և խթան է եղել հանճարների և ընդունակութեանց, որոնք միայնութեան մէջ կորչելու էին: Ոչ մի բան ընդունակ չէ այնքան թուլացնել մեր ոյժերը, որքան միայնութեան զգացմունքը՝ երևան եկած հէնց այն ժամանակ, երբ մենք ձգտում ենք հասնել մի նպատակի, որն ոչ ոք չէ հասկանում:

Անհատական, եղբայրք, միայնութեան այն տեսակը, որին պէտք է պատրաստ լինի գարուս մարդկանց մէջ միայնակ մնացած այն քրիստոնեային, որ ուզում է իւր Ուսուցչին հետևիլ և որոնել Աստուծոյ փառքն ու արքայութիւնը: Բայց ինչ կը լինի մեր վիճակը, երբ այս ընդհանուր փորձութեանը կմիանան և ուրիշ մանաւանդ փորձութիւններ, երբ հիւանդութիւնը և մահը շատ անգամ աւերակ են դարձնում ամէն բան մեր շուրջը և մեր միայնութիւնը աւելի բարդում են: Ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, եթէ որ աւելանայ բնաւորութեան տանջող անհամապատասխանութիւնը և սուր տարաձայնութիւնք, որոնք շատ անգամ տանում են յոպիթութիւնը:—Մենք ամէնքս, եղբայրք, առաւել կամ նուազ չափով, կարօտ ենք մխիթարութեան: Ուստի ես շտապում եմ դառնալ իմ վերցրած քնագրի երկրորդ մասին՝ «ես չէմ ինչ», պէտք է հայր ընդէս է»:—Քրիստոսի Փրկչին մերոյ այս մխիթարութիւնը՝ պէտք է որ մեր մխիթարութիւնը եւս լինի:

«Ես ես չէմ ինչ» պէտք է հայր ընդէս է»—ահա թէ ինչն է կազմում Քրիստոսի, այժմ ու զօրութիւնը: Ի՞նչ նշանակութիւն ունին երկրային բոլոր միայնութիւնները, երբ Նրա Հայրը Նրա հետ է: Նա կարող է մարդկանցից առանձին, բայց Նա լսում է յաւիտեան լսուղ այս հիանալի խօսքերը՝ «Դու ես որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»: Հայրը, եղբայրք Նրա հետ է: Եւ Նա միշտ հոր հետ, որպէս Նրա միածին որդին, անբաժան Նրանից ըստ իւր Աստուածային էութեան: Բայց միթէ մենք կարող ենք մոռանալ, որ նոյն ինքն Նա, խաչի վրայ, մարդկանցից արհամար-

հուսած, զգայ, որ երկինք փակուեցաւ իւր համար։ Կարող ենք միթէ մոռանալ, որ թոռնատած նրանցից, որոց սիրում էր այս աշխարհիս վրայ, նա ամիսներ առաջ էր երեսը դէպ ի վեր բարձրացնել և բացագանչել «Աստուածդ իմ, Աստուածդ իմ, ընդէ՞ր թողեր ինձ»։ — Միթէ մոռանալ այս։ Բայց դա նշանակում է մոռանալ թէ ինչ գնով մենք փրկուած ենք, դա նշանակում է փակ աչքերով անց կենալ անհուն անդունդը այն ողորմութեան, որոյ հանդէպ խոնարհւում են միշտ անգամ հրեշտակները, աշխատելով հասնել նրա խորութեանը։ Սակայն Յիսուս Քրիստոս ճանաչեց այդ լքումը, որպէս ի մենք, եղբայրք, քնուած չճանաչենք նրան։ Երբ նուիրը հաւատում մեզ նրա հետ միանում է և մենք կը իբայնենք մեզ Նրա փրկարար գործը, մենք իրաւունք ունինք դիմելու դէպ ի Աստուած և անուանել նրան Հայր։ Մենք կարող ենք, մեր հերթում, կրկնել այն խօսքերը՝ «Ես գնամ դէպ, ի՛մ Հայրս ինձ հէտ է»։ Ահա թէ ինչն է քրիստոնէի ոյժն ու միութիւնը։ Այն ժամանակ միասնութեան բոլոր փոքրութիւնները կորչում են այս միութեան մէջ։

Դուք միասնակ էք և կատարում էք Թերևս, որովհետև ես ձեզ ասացի, որ դուք միասնակ պէտք է վկայէք ճշմարտութիւնը, որին միւսները չեն ընդունում։ Եւ ոմէ էք դուք, որ կարծանք ձեր միտքը ամբոխի մտքերի հանդէպ հանէք, հատատաք այն բանին որ ուրիշները հերքում են։ Բայց այս դատալի տարակուսութեան մէջ ես ուրիշ ոչ մի այլ միութիւն չեմ տեսնում, բաց ի այս միտքը՝ «Ի՛մ Հայրս ինձ հէտ է»։ Այո՛, միացէք Աստուծոյ հետ, հայցեցէք նրա օրհնութիւնները ողորմութիւնն ու օգնութիւնը և դուք հաստատուն կըլինիք, եղբարք, և կրնօսիք (հըզմարտութիւնը) առանց դողալու և զիջանելու։ — Երբ Աստուած ձեզ հետ է, ոչ մի բան չէ կարող ձեզ լռեցնել, ոչ մի բան կարող չէ կանգնեցնել ձեզ։ Եւ միթէ դուք չէք տեսնում։ Աստուծոյ մարգարէների ոյժը հէնց դրանում էր ամեն մի դարում, որովհետև ամեն ժամանակի համար Աստուած իւր մարգարէներն ունի։ Տիրապետող անօրէնութեանց դէմ բողոքելով, ինչ կ արող էին նրանք անել, եթէ ոչ այս ապաստանարանը, այս օգ-

նութիւնը ի վերստաւ չունենային։ Կարծում էք, որ նրանք իրանց մէջ այնքան այժ կունենային, որ հրաժարվէին ամբողջ աշխարհից և իրանց քարոզներով միակ միայնաձի մնային։ Նրանք լաւատմ էին, զգալով որ Աստուած իրանց հետ է։ Ո՛չ Մոսէսը, ո՛չ Եղիան, ո՛չ Պօղոս առաքեալը իրանց քնաւորութեան մէջ երբէք չէին գտնում այն գերմարդկային այժը, որ նրանցից այնպիսի մեծ մարդիկ պատրաստեց՝ և այնքան հաստատուն հաւատոյ և բարեպաշտութեան մէջ։ Նրանք իրանք մեզ ասում են, որ Աստուածծ է նրանց հրաւիրողն ու ուղարկողն՝ ասելով «Եա պէպ է ո ղընաւդնէրով խօսկ»։—Եւ այդ շըրթունքները այլ և այլ չեն լսում և մարդկանց բոլոր ծալրաձութեանց և անէծքներին պատասխանում են այս բառերով «Մէկ հէպ Աստուածծ է»։ Եւ նայեցէք, այն ժամանակ երբ այդ միտքը գաղնութիւնից նրանց պահպանում էր, ինչպէս նրանք համբերատար սպասում էին, մինչև որ Աստուածծ ի կատար կածէր իւր կամքը։ Մենք լսում ենք թէ այժմ ինչպէս վատաբանում են մի նորագիւտ արժանաւորութիւն, այն որին ազգասիրութիւն են անուանում, որոյ մէջ, ասում են մեզ, իմաստուն մարդը պէտք է գտնի իւր ապաւէնը այն ժամանակ երբ պաշտպանում է մի ճշմարտութիւն, որ չեն ընդունում երկրիս վրայ։ Եղբայրք, նրանք, որոնք Աստուածուն ճանաչում են, կարօտ չեն այդ ապաւէնին։—Եթէ աշխարհը նրանց կը մերժէ, նրանք իրանց ապաւէնը կը գտնեն ոչ թէ այդ արհամարհանքի մէջ, այլ Աստուածոյ անհուն սիրոյն մէջ։ Եւ միանգամայն խելքի քննողական մանրութեամբ ծառայելու ճշմարտութեան, նրանք կաշխատեն սիրել և լուսաւորել նրանց, որոնք իրանց մերժում են և չեն ընդունում։ Բարեբանե՛նք և օրհնենք Աստուածոյն այն պատճառաւ, որ Նա, որ էր նոյն ինքն ճշմարտութիւնը, միխիթարութիւն գտաւ իւր չարչարանքների մէջ հօր հետ միասին լինելովը, և այն պատճառաւ, որ Նա լսելի վրայ, նոյն իսկ իրան անիծողների համար՝ այս վեհ աղօթքը մրմնջաց՝ «Հա՛յր, ներո՛ղ ԹՈՒՅ»։ Նրա նման՝ աշխատենք մենք էլ մեր ապաւէնը՝ Աստուածոյ հետ միասին լինելովը գտնել, և եթէ աշխարհը մեզ ա-

աեց, մերժեց, բաւականին այժ կը գտնենք, որպէս զի մինչև վերջը ծառայենք ճշմարտութեան առանց թուլութեան և վոխրոգութեան:

Մենք խօսեցանք խելքի վարձութիւնների վրայ, բայց կան և սրան փոխ ունեցողներ, որոնք արատայայտում են կարծրութեամբ և նեղիչ անզօրութեամբ, զորս ծագեցնում է միայնութիւնը: Բայց ճշմարտապէս հաւատացեալը, եղբայրք, այն ժամանակ և միխիթարութիւն կը գտնի Աստուծոյ սիրոյն մէջ: Եթէ նրան պակաս է մարգկանց սէրը, կարծում էք որ Աստուծոյ սէրը չէ կարող լեցնել նրա սրտի այդ պակասը: Մթէ սիրոյ աղբիւրը Աստուած չէ. կամ կարծում էք թէ այդ աղբիւրում ջուրը պակաս է: Մթէ կարծում էք, որ աշխարհից ստուած սիրտը Աստուած կը թողնէ գաստարիկ, անպտուղ և ցամաքեալ: Նա ինքը չէր մխթէ ասոյը, թէ ոլ որ իւր սիրոյն համար թողնում է ամէն բան՝ հարիւրապատիկ աւելի կստանայ հանդերձեալ կեանքումը: Կարծում էք որ այն բեկեալ սրտերը, որոց մէջ Աստուծոյ օրհնեալ ներկայութիւնն է նկարվում, աւելի ապրքատ են սիրոյ, այն սրտերը, որոց աշխարհը իւր արուեստական փայլովն է շրջապատել: Աշխարհի սէրը, որ այնքան շուայլ է բարձրագոչ, և յաճախ, ունայն արտաքինութեամբ մխթէ արժէն այն յաւիտենական սէրը, որով Աստուած լեցնում ամբողջապէս իրան նուիրուած սրտերը:—Մխթէ միայնակ լինել է նշանակում ունենալ Աստուած իւր հոգու մէջ և համոզուած լինել, որ այդ հոգին,—սկզբում միայն մեղսոից ցանկութիւններով և անվայելուչ խորամանկութիւնով կաշկանդուած այդ հոգին,—տաճար եղաւ Նրան, որ է նոյն ինքը սէրը:

Ես տեսել եմ, եղբայրք, երկնքից վարձատրուած այդպիսի հոգիներ, որ իրանցից լսուած ամէն բանի վախարէն էլ սասցած են. և որքան շատ է եղել աշխարհի ուրացութիւնը գրանց նկատմամբ, այնքան աւելի նրանք լցուած են եղել աստուածային սիրով իրանց միայնութեան մէջ: Եւ երկրային ամէն ցոնքքներին, ամէն ուրախութիւններին և խափուսիկ յոյսե-

բին, կարծեմ, այսպէս են պատասխանած՝ «Դուք ինչ ջնաւկ էք ըսելու, քայց ես ջնաւկ չեմ, վասն զի Հայր ինչ հէք է»: Վերջապէս միայնութիւնից յառաջացած ամենամեծ դայթագղութեան, որ է յուսահատութիւնը, զէմ ես՝ ես առաւել հզօր միտք չկայ, քան այն թէ՝ «Աստուած ինձ հէք է»: Սակայն յուսահատութեան այս ահռելի վտանգին, որ մեր բոլոր ջանքերը ջախջախում է երբ մենք միայնակ ենք գործում, քրիստոնեան ենթակայ չէ, որովհետև իւր կեանքին համար միշտ մի անսասանելի վկայ ունի:—Աշխարհիս վրայ ունեցած նրա վարքերի, անսասանելի և աննշմարելի վիճակը, միշտ մեծ է Աստուծոյ մօտ և մօտիկ նորան: Ո՞րքան ուժեղ արիութիւն է զարթեցնում մեր մէջ հէնց միայն այս միտքը: Դիտնալ որ աշխարհումս ամէն քան ունի իւր նշանակութիւնն ու արժէքը և թէ՝ ունենալ թէ չունենալ յաջողութիւն մարդկանց մէջ, դա մի և նոյն է, և սակայն ճշմարիտ Աստուծոյն ծառայել,—սրանով արդիօք չէ՞ բացատրվում անխախտելի հաստատակամութիւնը այն մարդկանց, որոնք գնացին այն ճանապարհով թէ՝ Աստուած ինձ հէք է»:

Եւ հետևաբար այն գործը, որ ես Նրա—Աստուծոյ—հետ եմ գործում չէ մինը մարդկային գործերից, որոց յաջողութիւնը հաղարաւոր դէպքերից է կախուած: Ընդհակառակ իմ միայնութեանը, իմ գործը ինձ հետ կորչելու չէ, որովհետև ես մի քար եմ նուիրում այն յաւիտենական շինութեանը, զոր գաղերն են կառուցանում: Եւ իմ արածը անօգուտ բան չէ, կորած բան չէ, վասն զի նա Աստուծոյ բանն է: Եւ երբ որ ես յուշանամ Կարապետի նման կը հրաւիրուիմ վերջ տալ բանտումս իմ օրերին, բանդ, ուր կարծեսթէ մոլորում են վերջին մրտքերն ու խօսքերն, երբ յանկարծ մահը ինձ էս կը հանի՝ մարդկանց իմ հրաժեշտ տալու ժամանակ անգամ չտալով ինձ՝ այն ժամանակ ես կասեմ՝ «Ես ջնաւկ չեմ այլ ինչ հէք Աստուած է»: կամ թէ՝ երբ ես հարկադրուած կը լինիմ ամբողջ տարիներ տանջանաց մահճումս տառապիլ՝ բայ ի սրտիցս ուրիշ ոչ մի կենթանի բան չունենալով մօտս և բացի աղօթելուց գործելու

ոչ մի այլ ոյժ չզգալով իմ մէջ, երբ զին մոռացած մարդկային քաբեկամութիւնը այլ և այլ չէ բաց անուամ իմ դուռը և իմ մաՀուան ստգնապներին ոչ ոք չէ ուզում վկայ լինել, — ես դարձեալ կարող եմ կրկնել՝ «ոչ, ոչ իմ աղօթքը և ոչ էլ իմ տանջանքները կորած չեն, վասն զի ես մենակ չեմ՝ այլ ինձ Հետ Աստուած է»: Ահաւասիկ, եղբայրք, քրիստոնէի մխիթարութիւնը: Ենթադրութիւններ և երևակայական պատկերներ ես չեմ անուամ ու ստեղծում, այլ ես ասում եմ այն, ինչ որ տեսնում եմ ամէն տեղ, ուր քրիստոնէական Հաւատը իշխում է սրտերի վրայ: Եթէ որ մեր մէջ կայ մեկը, որ չգիտէ և չէ ուզում գիտենալ քրիստոնէական այս մխիթարութիւնը՝ ես դառնում եմ դէպ ի այդպիսին և ասում՝ ճշմարիտ քրիստոնեայ լինելուց դուք ուարտաիում էք, բարեկամ, վասն զի այդպէս լինելով միայնակ կը մնաք աշխարհիս մէջ, որոյ Հետ ընտանի կապերով կապուած էք: Բայց դուք կարծում էք թէ խոյս տալով Աստուծոյ կանչած ճանապարհից- դուք պակաս միայնակ կը մնաք: Կեանքը ինչ բան է, եթէ ոչ ամենայն րոպէ աւելացող՝ հիասթափումն: — Որքան վիշտ կար անցելոյն մէջ և դեռ որքան դրկանք կայ ապագայում: Ո՞ւր են այն մարդիկը, որոց վրայ դեռ երէկ յենուած էր ձեր սիրտը, և վաղը ճիշ կը լինին արդեօք նրանք, որոց վրայ է այսօր ձեր յոյսը:

Պալիս է մահը և անպագրում հնձում ամէնքին և միմիայն նրանք, որոնք ոչ ոքին և ոչ երբէք չեն սիրել, չեն ղգում իրանց, ամենայն տարի աւելացող, միայնութիւնը: Ընդ ամին, մահն անդամ ի բաց բառնալով, միթէ դուք չէք պատահած երբեմն աշխարհի յիմարութեանց մէջ՝ ինքնասիրութիւնից և անտարբերութիւնից յառաջացած այն միայնութեան, որ մահուանից էլ մեծ հարուածներ է տալիս: — Ախ թէ ուշ դուք մենակ էք մնալու, եղբայրք, ձեր կեանքում: Ներողութեամբ պէտք է տանէք ձեր դատութիւնը, որ ձեզ Համար մի բեռը կը լինի, վասն զի ձեզ չըկապատողները այլ և այս ձեզ Հարկաւորութիւն ունենալու չեն: Կուգայ մի օր, և թերևս եկած էլ է, երբ կեանքում դուք միայնակ էք մնալու: Բայց այդ դեռ բա-

ւական չէ. դուք միայնակ կը մնաք նա և՝ մեռնելիս: Արդ՝ այս մեծ ժամուն ինչ բանի են պետք ձեզ համար՝ մարդկանց անկեղծ գովասանքները, քաջալերութիւնները և այն իսկ մոռերմութիւնը: Հասնելով կեանքի այս նեղ և անճոռնի անցքին՝ դուք պետք է միայնակ անցնիք նրա վրայից: Արդեօք դուք այս մասին մտածե՞լ էք, դուք նրա համար նախապատրաստո՞ւել էք: Մի բան էլ կայ. երանի՞ գործը մահուամբ միմիայն վերջանայ: Բայց մահը մի ճանապարհ է, որ դէպի ի Արդար դատաւորն է առնում: Այս վկայում է թէ ձեր խիղճը և թէ սուրբ Գիրքը: Երևակայեցէք Ամենակարողի Ամառի հանդէպ էլ դուք միայնակ կը մնաք: Եւ մարդկանց բոլոր ցնծութը ու զառանցաքները, նրանց շողոքորթութիւնը, նրանց բոլոր կեղծուպատիր խորհուրդ ու խրատները թեթև ծուխի նման կը ցնդեն, կանհետանան: Միայնա՜կ, առանց որ և է պաշտպանի, միայնակ իւր անյեղլուխ, իւր սանձարձակութեամբ, իւր ապերախտութեամբ, իւր ներքին աչնչութեամբ և գաղտնի յանցանքներով, որոնք յաւիտենական օրվայ պայծառ լուսոյ հանդէպ՝ երևան են գալու: Միայնա՜կ. բայց ինչո՞ւ: Ասուածած առաջարկեց ձեզ իւր թողութիւնը, իւր սէրը, բայց դուք արհամարհեցիք նրանց, օգուտ չքաղեցիք նրանցից: Բայց եթէ ձեր հոգին ձեզ համար թանգ է, յայն դէպս յանուն ձեր միջնջենական ապագային, յանուն ձեր սեպհական փրկութեան, գէթ այժմ ընդունեցէք Աստուծոյ ձեզ առաջարկած սէրը, վասն զի, եղբայրք, սարսափելի բան է կենդանի Աստուծոյ չեռքն ընկնելը: Հիմի դուք հասկանո՞ւմ էք թէ ինչ է նշանակում իւր մէջ ունենալ զԱստուածած և ձեռք բերել այս սէրը, որից ոչ մի բան մեզ չէ կարող անջատել, ոչ իսկ նոյն ինքն մահը:—Այս է տհա քրիստոնէի վիճակը, ուրեմն և մեր վիճակը, երբ միայն մենք կամենանք: Խորհրդաւոր յաւիտենականութեան սեամբի վրայ մենք այն ժամանակ կարող ենք ասել՝ ես ինձնակ չեմ, ինչ հեռ Աստուած է: Մենք այս կարող ենք ասել՝ երբ ամէնքը մեզ թողած են վշտի և տառապանքի մէջ, ամենավատթար վիճակի մէջ. մենք այս կարող ենք ասել երկնային թագաւորին և մեզ ու մեր

վարձուքեանց ժամերուն։ Իմ այն թոյլ քարոզը, եղբարք, ի դուր տեղը ատուած չի լինիլ, եթէ որ դուք գաւառակ և միայնակ տրտում այստեղ մնատած գոլով՝ այստեղից ձեզ հետ կը տանէք այս ազանչելի խոստումը թէ՝ «Ես եղէց յիւր ի Հայր, և դուք եղիջիք ինձ յիսոպէոս և ի պօղոս, ասէ Տէր Ամենակալ» (Բ. Կորնթ. Զ. 18)։

(Թարգմ. ԵՂԻՇԷ ՓԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

(Շարս-նախ-ընդ-հ).

Այդ բոլորը թէպէտ իրագիտական տեղեկութեանց լեզուական մասն էր կազմում, բայց դեռ ևս չէր յատկապէս լեզուի բաղմակողմանի կրթութիւն, կամ այն սահմանը չէր, ինչ որ լեզուի ուսուցչի պաշտօնին է վերաբերում։ Որպէս զի այս մասը որոշակի ջոկնուի, մենք պէտք է իրագիտական ծանօթութեանց գործը իրր կանխագոյն և արդէն պատրաստ վերջացուցած համարենք, որ այնուհետև նոյն չափով էլ հոգանք այդ ձեռք բերած տեղեկութիւնները կանոնաւոր և դիտեցիկ լեզուով արտայայտել տալու. ոչ այսքան միայն, այլ պէտք է գիտակցութեամբ քննել տանք, թէ որո՞նք են այդ նպատակի համար աւելի ընտիր և աւելի յոռի լեզուական հնարներն ու նոցա գործածութիւնները։ Իրագիտական ուսուցման ժամանակ վարժապետը կարող է ձգտել, որ դէթ ոմն պատշաճաւոր ձև գտնէ այն տեղեկութիւնները արտայայտելու համար, ինչ որ հաղորդել է ուզում. նա ժամանակ և յարմարութիւն չունի հոգալու և այն մասին, որ կշռադի մէջ դնէ ուսանելի ծանօթութեանց համար գործ դրուող զանազան տեսակ և բոլոր հնարաւոր արտայայտութեանց ձևերի առաւելութիւններն ու պակասութիւնները։ Լաւ կրթութիւնը պահանջում է աշխատանքի բաժանումն. մի կողմից ծանօթութեանց պաշարը պէտք է ընդարձակուի, միւս կողմից լեզուն պէտք է զարգանայ։

Նախ և առաջ հասկանալի է, թէ ուսուցիչը ամենայն խնամով պէտք է հոգայ, որ մանկան հնչումը, արտասանութիւնը և առոգանութիւնը աղնուանայ, ուսումնարանի շէմքը կոխելու օրուանից արդէն պէտք է սկսուի կոպիտ ձևերով լոսնելու և գաւառական արտայայտութիւնից դէմ դուշադիր պատերազմը։ Չարիք չը կայ թողնել մանուկներին, որ այնքան ժամանակ անարդել գործ ածեն իրանց լեզուի կոպիտ և տգիտութեան սեալները, մինչև որ մեծանան և սկսեն քերականութիւն սովորել։ Թէպէտ համաձայնութեան նրբութիւնները ականջի մէջ դժուար է տպաւորվում առանց քերականական յատուկ ուսման. բայց մանուկը շատ վաղ պէտք է վարժուի որոշել «նա է»՝ «նորա են»՝ «չորս լինձոր» (և ոչ—չորս լինձորներ)՝ «մի մարդ» (անորոշ)՝ «մի մարդը» (որոշ)՝ «ձեռքս» (և ոչ—իմ ձեռքը՝ մանաւանդ ոչ—իմ ձեռքս»), և այլն։

Լեզուի ուսուցման և իրագիտական ուսուցման մէջ աշխատութեան խնայական բաժանումը քերականութեան աստիճանում է երևում։ Բայց դպրանից առաջ ժամանակներում շատ անգամ ուսուցիչը կարող է տարակուսել, թէ արդեօք այն, ինչ որ ինքը ուսուցանում է, լեզուին է պատկանում, թէ իրագիտութեան, կամ թէ միանգամայն երկուսին է վերաբերում։ Խնդական լուծումը այն կը լինի, եթէ նա միաժամանակ աշխատի երկու կողմերին էլ իւր ուշքը վճարել։ Բայց և այնպէս հարկաւոր է իմանալ, թէ ինչումն է կայանում այդ երկու կերպ դասերի տարբերութիւնը։

Արդէն վերը ասուեցաւ, թէ նոր անունների բացատրութիւնը մեծ մասով իրագիտութիւն է։ Եթէ աշակերտը առաջին անգամ լսում է «ստրուկ» բառը, պէտք է նորա մտքում պարզուի ստրկութեան վիճակը, այսինքն հարկաւոր է նորան հասկացնել նոր գաղափար։ Այս ուրեմն լեզուի գործ չի լինի, թեպէտ բառի առթիվ է սկսուել համապատասխան իրագիտական բացատրութիւնը։ Իսկ եթէ աշակերտը մի այնպիսի առարկայի անուն է լսում, որ նորան վաղուց ծանօթ է եղել առանց անունը գիտենալու, սա նորա համար լեզուի դաս է։ Բայց հարկաւ այսպիսի դէպքեր այնպես յաճախակի չեն կրկնվում, ինչպես առաջիններում։

Լեզուի առաջին դասերը բնականապէս ինքնին կազմում են նշանակիչները, որ մեր ուսուցիչները վարմանալի կերպով անուշադիր են թողնում կամ պատահականութեան են մատնում։ Աշակերտները իրանց դիտեցածների համար բերում են տեղական և սովորական անուններ, որ վարժապետը ստիպվում է աւելի ընտիր և ճիշդ արտայայտութիւնների թարգմանել, կամ նա ընթերցանութեան ժամանակ ուսումնական դարձուածքները աւելի ընտանեկան անունների է փոխում։ Նշանակիչները աւելի ևս բազմանում են, քանի որ հետզհետէ հաւաքվում են նկարագիր և բանաս-

տեղեկական կամ նաև գիտնական համազօր ասութիւնները։ Առնենք զոր օր. «մահ» կամ «մեռելութիւն» բառը, որ ընտիր ոճով «հանգիստ» կամ «վախճան» է կոչվում. սորա համեմատ փոխաբերական և նկարագրական դարձուածքներ բազմաթիւ են՝ «ապաշխարութիւն կենաց», «յաւիտենական հանգիստ», «ընութեան վճար հատուցանել», «հանգերձեալ կեանք», «բաժանուիլ յաստեաց», «հանգչիլ ի գոգն Աբրահամու», «շունչը փչել», «աշխարհքից հեռանալ», «գերեզմանի դուռը հասնել», «գետինը մտնել», «յաւիտենական տունը դառնալ», «սանդարամէտը իջնել», «դժոխք կամ արքայութիւն գնալ», «սև օրին հասնել», «խաւար աշխարհքի բաժին լինել», «հոգին աւանդել», «ընութեան կապից լուծել», Երբ որ ուսուցիչը այսպիսի զուգականներն է տալիս, նորա դասը լեզուի դաս է։

Բայց այսպիսի կրթութիւններումն էլ՝ անխուսափելի են իրագիտական տեղեկութեանց թևթև ձեռվ ծանուցումը։ Փոխաբերական զուգականները ինքնին առաջ են բերում զանազան աւարկաների համեմատութիւններ, որոնցից պէտք է անշուշտ օգուտ քաղել, որպէս զի հարկաւոր արտայայտութեան նշանակութիւնը աւելի զգալի կացուցանուի։ Իսկ այս բոլորը հասկացնելու համար՝ շատ անգամ կարևոր կը լինի իրական նոր տեղեկութիւններ տալ կամ իրագիտական դաս տալ։ Միայն աւելի լաւ է, եթէ այսպիսի դասերով չը խանգարուի բուն լեզուի դասը. և առ հասարակ, որքան որ հնարաւոր է, պէտք է զգուշանալ ուղիղ ճանապարհից կողմնակի շեղուելու։ Եթէ նկարագրած պատկերը ծանօթ է, նա արդէն ինքնին ազդեցութիւն կը գործէ, իսկ եթէ ոչ, առ ժամանակ ոչինչ տպաւորութիւն չի առաջացնի, բայց (դատարկ) անունը միւսների հետ կցուելով կ՝ածձեցնէ նոյնանանիշների պաշարը։ «Երթալ ի գոգն Աբրահամու» կամ «հոգին մարմնից բաժանուեցաւ» ասացուածքները հազիւ թէ հասկանալի լինին մանուկներին, բայց քաջ յիշողութիւնը մտքի մէջ սերտած կը պահէ իբրև մահուան համար նոր նոր անուններ, եթէ մինչև անգամ իմաստը շատ աղօտ կերպով իմանայ։

Նկարագիր ասացուածների նկատմամբ բացատրութիւնը միակ առիթ չէ, որի պատճառով նոյնանիշների մասին դասը փոխուելով՝ իրագիտական դասի կերպարանք է առնում։ Հազիւ կը պատահի, որ համանիշները բոլորովին նոյն լինին իրանց նշանակութեամբը. նոքա արտայայտում՝ են նշանակութեան զանազան նրբութիւններ և աստիճաններ, կամ մի և նոյն առարկայ նկարագրում են այլ և այլ տեսակէտներից և աւելի կամ պակաս որոշմամբ։ Այս աստիճանների տարբերութիւնները հասկացնելու համար՝ մի հնար կայ, այն է, որ լուսաբանենք իրագիտական կողմը։ «Ճշմարտութիւն», «իսկութիւն», «ստուգութիւն», «ճշդութիւն», «հաւաստու-

թիւն», «հաւանականութիւն», «հնարաւորութիւն» բառերի կարգը ցոյց է տալիս, թէ կից բառերի իւրաքանչիւր զոյգը բաւական նմանութիւն ունի նշանակութեամբ և ամենափոքր զանազանութիւն, բայց ծայրերի բառերը («ճշմարտութիւն»—«հնարաւորութիւն») արդէն խիստ տարբեր են իրարից։ Արդ եթէ դոքա բացատրուին, այն ժամանակ դասը առարկայական կը լինի և ոչ թէ լեզուական։ Այսպիսի դասերում զուր կը լինին միայն հարևանցի ակնարկները. կամ պէտք է լռել, կամ հիմնովին ցոյց տալ մանր նրբութիւնները։

Անհիմն չէ այն խօսքը, երբ որ ասում են, թէ անունները այն ժամանակ միայն պէտք է ուսուցանուին, երբ որ նոցա իսկական իմաստն ու գործածութիւնը հասկանալի ենք կացուցել։ Դա մի առողջ սկզբունք է, և միշտ օգտաւէտ է, որ վաղօրօք այնպիսի անուններ գործ չածենք, որոնց նշանակութիւնը առ ժամանակ անըմբռնելի են մնում։ Բայց որովհետև մեր քմից համեմատ չենք կարողանայ մեր ուզած բառերը թագցնել, ուրեմն միակ ելքը այն կը լինի, որ տեղն եկած ժամանակ՝ հարկաւոր բառը այնքան մերձաւոր նշանակութեամբ գործ ածենք աշակերտի առաջ, որքան որ նա հասու կարող է լինել նորա ճշդութեան, թողնելով որ աւելի նրբագոյն նշանակութիւնը ուշ իմանայ։ Առ ժամանակ գուցէ և աշակերտը բառի զօրութիւնը լաւ չըմբռնէ. բայց կասկած չը կայ, թէ նա փոքր ինչ աւելի կը կազդուրուի այնպիսի արտայայտութեանց պաշարով, որոնցից որ յետոյ ուզած տեղը ազատ ընտրութիւն պէտք է անէ։—

Շրջենք խնդիրը և տեսնենք թէ ինչպէս իրագիտութեան ուսուցիչն ևս երբեմն միանգամայն լեզուի ուսուցիչ է դառնում։ Մենք գիտենք, թէ ուսման աւելի ձեռնտու կարգը այն կը լինի, եթէ իրը առաջին տեղ ստանայ, իսկ նորա անունը՝ երկրորդ տեղ։ Ուրեմն իրագիտութեան ուսուցիչը կարծես թէ լեզուի միակ ուսուցիչ կը լինի։ Այդ խօսքի մէջ մասնաւոր ճշմարտութիւն կայ։ Հէնց նոյնանիշների պաշարը հարստացնելու գործի ժամանակ լաւ է, որ իրագիտութեան ուսուցիչը շատ էլ չետ չը քաշուի։ Ի հարկէ նորա պաշտօնը չէ, որ իւր առարկային վերաբերեալ իրողութիւնը արտայայտելու համար՝ մի առ մի գործ դնէ ամէն հնարաւոր ձևերը, որքան որ լեզուի մէջ կան։ Սակայն մի դժուար խնդիր բացատրելիս, նա ինքը կը ստիպուի փորձել և գործածել զանազան տեսակ ասութեան հնարներ, հարկաւորը ամենայն խոհեմութեամբ ընտրելով լեզուի հարուստ պաշարից, որպէս զի իւր վարդապետածը ճշտութեամբ ըմբռնել տայ։

Օրինակի համար վերս առնենք ծանրութեան զօրութիւնը։ Խնդիրը բացատրելու համար ուսուցիչը աւելի պէտք է չիշատակէ ծանօթ երևոյթներ, զոր օր. աննեցուկ մնացած առարկաների դէպի գետին անկումը։ Բայց նա կարևորութիւն կ'ղտայ զանազան ասութիւններ ևս գործ դնել,

որոնք որ մի և նոյն ըղձութեան բացատրութեան համար պատշաճ են և յարմարութիւն ունին, այն է՝ ծանրութիւն, կշիռ, դեպի վայր ներգործող ճնշողութիւն, դեմքին ընկնիլ, ձգողութիւն, վոլտագարձ ձգողութիւն, դիմացէ դիմաց քաշուիլ, ուղիղ ընթացքէ խոտորուիլ։ Այս դարձուածքներից մի քանիսը իսկոյն կը հասկացուի իրրև ծանրութիւն նշանակող արտայայտութիւն, միւսների ըղձութիւնը ուրիշ ժամանակներում ըմբռնելի կը դառնան, բայց այժմէն իսկ օգտով կը պահուին յիշողութեան մէջ։

Դարձեալ դանք լեզուի ուսուցչի պաշտօնին։ Մենք գիտենք, թէ նա աշխատում է աճեցնել աշակերտների բառական պաշարը, ընդարձակել հասկացողութեան ոլորտները։ Արդէն ընթերցարանների հատուածները այնքան թեթև բովանդակութիւն պիտի ունենան, որ ուսուցիչը հնար ունենայ նոցա միջնորդութեամբ փոխանակ իրագիտական ուսման՝ աւելի լեզուով զբաղեցնել աշակերտներին։ Այդ հատուածների հիման վերայ նա կազմում է նոր նոր վարժութիւններ. նա պատուիրում է աշակերտին գրքի պատմութիւնը բերանացի ասել կամ ու ոճերը պահպանելով. տալիս է հարցմունքներ գարձեալ ընտիր ասացուածներով և ձևերով պատասխաններ սպանալու մտօք։

Մենք հասանք այն կետին, թէ ինչ նշանակութիւն ունի անգիր անելը։ Այս օժանդակութիւնը գուցէ օգտէ նաև տեղեկութեանց պաշարի բազմանալուն, բայց աւելի լաւ է, եթէ գլխաւորապէս լեզուի զօրանալուն նպաստէ։ Վաղ ժամանակներից յայտնի է դա որպէս ուսման օժանդակ միջոց. դորա առաւելութիւնը այն է, որ դժուար չէ գործ դնել ուսուցչից շատ աշխատութիւն չի պահանջում, մանաւանդ որ իրօք ևս օգտաւէտ է։ Ցուներց դպրոցներում մանուկները անգիր էին սերտում և արտասանում բանաստեղծների երկերը։ Հրեից մէջ ծնողները իրանց որդոց դասախարակիչներ էին և ուրիշ լեզանակ չունէին ուսուցանելու համար։ Ուսման նիւթը կազմում էին Հնդամատեանը, առ հասարակ Հին Կտակարանը և Թաբբինների պատուէրները, որ միայն յիշողութեամբ պէտք է իւրանային։ Այս օր ևս այդ սովորութիւնը չէ վերացել եւրոպական ուսումնարաններից։ Ֆրանսիական լիցէոններում լեզուի ոճը սովորեցնում են՝ գլխաւորապէս իրանց դասական հեղինակների գրուածքները բերան առնել տալով։

Այս գործում բառարանը բնականաբար աւելի յարգի է համարուած։ Բանաստեղծութեան չափաբերական ձևը, վսեմ ոճը, զգացումներ զարթուցանելու յարմարութիւնը՝ շատ է դիւրացնում յիշողութեան

գործը։ Մեր սովորած բանաստեղծութիւնները արդէն ինքնին մի գանձ պիտի համարուին մեր յիշողութեան համար։ Նաև նորա ազդում են մեր սրտի վերայ, որի ներգործութիւնը յետոյ անցնում է մտքի վերայ ևս։ Նոցա մէջ կան բազմաթիւ ընտիր մտքեր, վսեմ պատկերներ և արտայայտութեան ձևեր, որոնք որ մեր մտաւոր բարգաւաճման համար խիստ նպաստաւոր են դառնում։ Երկրորդ տեղն է բռնում զգացմունքը շարժող և գաշնակաւոր ոչ՝ գրուածքը։ Թէպէտ իւր ձևով դա բանաստեղծութեան բարձրութեան չի հասնում, բայց մեր նպատակի համար կարող է աւելի օգտաւէտ հանդիսանալ։

Իբրև ապացոյց՝ քննենք, թէ մտքի հարստութեան կողմից ի՞նչ է վաստակում մանուկը, երբ որ բանաստեղծութիւնների է անդիր սերտում։ Մանաւանդ ի կշիռ առնունք մեզ զբաղեցնող մասնաւոր խնդիրը, այն է բառերի պաշարը ընդարձակելու խնդիրը։ Լիովին խոստովանելով, թէ բանաստեղծութիւնը առ հասարակ շատ հեշտ է տպաւորվում մտքի մէջ, մենք կրկ չը պէտք է մոռանք այդ ստացման մի քանի պակասութիւնների դէմ։ Ձափարերական ձևը, առաւելապէս զգացմանց վերայ ներգործութիւնը, վսեմ լեզուն—սորա ամէնքը միացած ուժով այնպէս են աղդում, որ հատուածը աւելի իւր ամբողջ-ընդհանուր տիրանում է մատաղ հոգու վերայ, ուր առանձին մասերի նշանակութիւնը կամ նաև հատ հատ բառերը՝ կարծես թէ օդի մէջ են ցնդում, չեն մնում դրոշմած։ Ասենք ածականը կարգալով հասնում է հետևեալ տողին.

Տացէիք և ինձ, դիւք, յաղթութիւն
Ընդդիմանալ ախոյեանին։

Արդ, ի՞նչ կը լինի դորա տպաւորութիւնը։ Այդ բառերը շատ քաղցր պէտք է հնչեն մանկան և աշխոյժ մատաղահաս կորիճի լսելիքի վերայ այն պատճառով, որ դորա վառում զարթեցնում են անձնասիրական զգացում որովհետև մի ոմն վերայ յաղթութիւն ստանալու և նորան ընդդիմանալու ախորժակ կայ մէջը։ Խնդրեմ ո՞վ է այդ մեկը և թէ ի՞նչ կայ ընդդիմանալու, կամ թէ ո՞վ է որ յաղթութիւն պէտք է տայ, փորձ չէ նորա՞վարժ ընթերցողի համար։ Նա նոյն չափով կը տգևորուի և դարձեալ իւր մտքի մէջ անջինջ պահելու ընդունակ կը հանդիսանայ, եթէ այն տողերը հետևեալ ձև ունենային.

Տացես և ինձ, Մուկ, յաղթութին
Ընդդիմանալ Խրտուիլակին.

կամ թէ աւելի խրթնաձայն—

Տայցիք, Մաճաճք, ինձ յաղթութիւն
Ընդդիմանալ Դաճիճակին։

Այս օրինակը ցոյց է տալիս, թէ բանաստեղծութիւնը իւր հրապուրիչ

ձևով յիշողութեան մէջ տպաւորվում է ոչ թէ իմաստի համաձայն, այլ իբրև սոսկ բառեր. նոցանից երեք քառորդը բառ է մնդվում, հազիւ միայն մի քառորդը իմաստ է ձևանում։

Այդ գրուածքից հանած կտորները թէպէտ աւելի դժուար են մնում մտքի մէջ, բայց նոքա շատ անգամ բանաստեղծութիւնից աւելի օգուտ են տալիս։ Մայն թէ սերտելու հատուածները երկար չը լինին, ապա թէ ոչ անպտուղ կը մնան։ Մեր պիտոյքն այն է, որ տեղն եկած ժամանակ պատրաստ ունենանք մի ընտիր ձև նախադասութեան, մի համապատասխան դարձուածք, մի յարմար ոճ այն մտքերը արտայայտելու համար, որոնք մեր լեզուին դժուարութիւն են պատճառում։ Այս նպատակին չենք հասնի, եթէ մի ընդարձակ հատուածի նախադասութիւնները իրար յետևից շարենք, այլ աւելի այն ժամանակ, եթէ լաւ սովորենք հատ հատ ասութիւնները, որոնք կամ կազմութեան կողմից կամ զօրութեան կողմից լեզուի ճոխութիւն են հանդիսացնում։ Շատ փոքր աշակերտներին դժուար կը լինի այդպիսի գեղեցիկ օրինակների բոլոր արժէքը հասկացնել։ Նոքա ուրեմն մանր ասացուածները միայն անգիր անելու վարժութիւն պէտք է ստանան. իսկ երբ որ բացուի նոցա քննադատական աչքը, այն հասակում պէտք է աւելի գերադասուին և անգիր անելու առաջարկուին այն տեսակ ձևերի օրինակները, որոնց ուսուցիչը բանականը կամ պարզուել են։ Բարձր դասարաններում ուսուցիչը բաւական չը պէտք է համարէ լոկ քերականութիւնը կարգաւ և մեքենայօրէն սովորեցնելու, այլ պատշաճ և անպատշաճ ձևերը դէմ առ դէմ համեմատել տալով պէտք է հաւանելի կացուցանէ առաջինների պիտանութիւնը. այդ ժամանակ աշակերտը պէտք է յառաջադիմէ ոչ թէ յիշողութեան վերայ ապաստանած, այլ իւր քննադատող ընդունակութեան սատարութեամբ։ Նա անշուշտ յօժարութեամբ անգիր կանէ այնպիսի դարձուածներ ու մանր քաղուածներ, որոնց գեղեցկութիւնը զմայլութեամբ իմացել է և այդպէս նոցա արժէքը ղգացել է։

Աւելի հասունացած աշակերտների համար արտասանութեան և փոքրիկ ատենախօսութեան վարժութիւնները ամենագեղեցիկ առիթներ են, որ խրախուսուին ընտիր բանաստեղծութիւններից և արձակ գրուածքներից լաւ կտորներ մտքի մէջ տպաւորել։

Վերոգրեալ նկատողութիւնները աւելի վերաբերում են բառերին կամ ստուգաբանական մասին, թէպէտ տեղ տեղ հարևանցի կերպով լեզուի միւս մասը՝ այսինքն համաձայնական կողմը նոյնպէս ակնարկե-

ցինք։ Բայց այս մասը արժանի է աւելի ընդարձակ հետազօտութեան, երբ որ ուրիշի խօսածը լսում կամ կարդում ենք, այն ատեն բառերի կապակցութիւնն ու բառերի կարգը մենք ստանում ենք նախադասութիւններով կամ նախադասութեանց շարքերով ձեւացած։ Այդ համեմատութեամբ էլ երկար հատուածից քաղած այնպիսի փոքրիկ կտորները անգիր ենք սովորում, որոնք ներկայացնում են նախադասութեանց ընտիր օրինակներ՝ կամ բառերի դասաւորութեան կողմից և կամ ոճի կողմից։ Մի նախադասութիւն քերականօրէն վերլուծել կարողանալուց առաջ, մենք ուրեմն պէտք է աշխատենք նախադասութեանց ձեւերի մեծ պաշար հաւաքել և զգալ նոցա էական տարբերութիւնները։

Ուսուցչի պարտականութիւն է, որ կարդալու վարժութեանց ժամանակ՝ անդադար կերպով նպաստէ և արագացնէ նախադասութեանց ձեւերը իւրացնելու ներքին գործողութիւնը. և ինչ որ աշակերտը իւր ընական աշխուժութեամբ չը կարողանայ կատարել, այն պէտք է ուսուցիչը արագացնէ արուեստական հնարներով։ Այդ պէտք է կատարուի այն ժամանակ, երբ որ քերականութիւն ուսուցանելու հասակը տակաւին չէ սկսուել։ Այս հասակը մօտենում է, և ուրեմն պէտք է լաւ նախապատրաստուի։

Ինչ որ մենք բառերի նկատմամբ ասել ենք, նոյնը պէտք է հասկանանք նախադասութիւնների վերաբերութեամբ էս. առաջ հարկաւոր է հասկացնել նշանակութիւնները, մտքերը, իմաստները, ապա թէ համապատասխան նախադասութիւնները սովորեցնել։ Որպէս զի մի իրողութիւն արտայայտուի, հարկաւոր է նախադասութիւն ունենալ. պարզ իրողութեան համար պէտք է պարզ, իսկ բարդ իրողութեան համար բարդ նախադասութիւն։ «Արեգակը մայր մտաւ», մի պարզ իրողութիւն է՝ պարզ նախադասութեամբ ասուած։ «Եթէ լերան վերայ բարձրանաս, աներեւութացած արեգակը դարձեալ կը տեսնես», մի պայմանական իրողութիւն է՝ թէական նախադասութեամբ ձեւացած։ Եթէ բանաւոր խօսակցութիւնների ժամանակ բազմաթիւ պարզ և բարդ տեղեկութիւններ ենք հաղորդել, մենք ուրեմն ընդ նմին սովորեցրել ենք բազմաթիւ պարզ և բարդ նախադասութիւններ։ Սորանից աւելի էլ ի՞նչ է հարկաւոր ուսուցանել։ Պատասխանը այն է, թէ ինչպէս որ բառերի ծանօթութեան համար ասել ենք, այս դէպքումն էլ խիստ օգտաւէտ է, որ մի և նոյն պարզ կամ բաղադրեալ հանգամանք արտայայտելու համար՝ աշակերտը սովորի գործածել բոլոր պեսպես լեզուական ձեւերն ու հնարները։ Այս ուսումը ոչ թէ իրագիտական ծանօթութիւն կը լինի, այլ յատկապէս լեզուի կրթութիւն։ (Այդերն ընդ ուսուցման ժամանակ՝ զարմանալի կերպով այս մասը անխնամ է թողնւում. և թէպէտ մեր քերականութիւնների համաձայնական մասը առ հասարակ տակաւին կերպով են կազմուած իրրև ձեռնարկ,

բայց նոցանից լաւագոյնները՝ Ա յտընեանի, Զալըխեանի գործքերը՝ ըստ արժանւոյն չեն գործածվում)։

Ա յժմ տեսնենք, թէ այս ուսման յատուկ խնդիրն ու բնութիւնը ինչումն է կայանում։ Դաստատութեան եղանակը նոյն է, ինչ որ բառերի ուսուցման համար պահանջուեցաւ։ Նախ պէտք է համապատասխան նշանակութիւնը լաւ հասկանալի դառնայ, որպէս զի այնուհետև կարելի լինի նախադասութեան մի ձև սովորեցնել։ Հիմա ասենք, թէ ուսուցիչը կարդացնելով հասաւ մի նախադասութեան, որ նորանոր կրթութեանց համար լաւ առիթ է դառնում. անմիջապէս նա պէտք է աշակերտներին տայ ուրիշ կերպ ձևացած նախադասութիւններ, և վարժեցնէ նոցա, որ սկսեն համեմատել, անձամբ գտնել նմանօրինակները, փոփոխելով եղած բառերը կամ դուցէ և առանց փոխելու։ Ա յս է ամենալաւ եղանակ՝ քերականութեան կանոնաւոր ուսման նախադուռը բանալու համար։ Միայն հարկաւոր է, որ ուսուցիչը լաւ խորհէ իւր ընթացքի մասին և էական հանդամանքները կարգաւ հասկացնէ, թեպետ առանց պահպանելու, որ աշակերտը այդ կարգը մտքի մէջ պահէ։ այդպիսի կրթութիւններից իւրաքանչիւրը աշակերտին պէտք է երևաւ իբր մի պատահական շեղումն ընթերցանութեան վարժութիւններից կամ հաւանցի լուսաբանութիւն։

Համապօր ձևերի ամենապարզ օրինակն է ներդործականից կրաւորականի կազմութիւնը. «Տիտոսը առաւ Երուսաղէմ քաղաքը», սխալ է եթէ այսպէս փոխենք «Երուսաղէմ քաղաքը առնուեցաւ Տիտոսից» (իբր թէ Տիտոսի ինքնին)՝ այլ պէտք է ասել «Երուսաղէմ քաղաքը առնուեցաւ Տիտոսի ձեռքով»։ Ապա կարևոր են նմանապէս սովորեցնել գոյականի և դերանունի իրար տեղ փոխանակելը, ածականների և մակբայների տեղ նախադասութեանց անդամների և յատուկ ստացուածների գործածութիւնը. «Գէորգը Մարգարտին ասաց»—եղբայրը՝ քրոջ, նա՝ սորան,—չփոթութիւն առաջ կու գայ, եթէ չ անձի համար ուղենանք այսպէս ասել «Նոմն՝ Թագաւորի մօրեղբօր և արքունեաց խորհրդականի միջնորդութեամբ ամենայն ինչ խաղաղացաւ»—կարծես թէ երեք հոգու միջնորդութիւն է եղել. նոյնպէս երկու հոգու միջնորդութիւն կը հասկանանք, եթէ ասենք «Թագաւորի մօրեղբայր և արքունեաց խորհրդական նոմն», բայց մէկ անձ կը հասկանանք եթէ այսպէս ձևացնենք «Ամենայն ինչ խաղաղացաւ նոմնի միջնորդութեամբ, որ Թագաւորի մօրեղբայր և արքունեաց խորհրդական էր»։—«Տաբացած երկաթը ձեռքով չեն բռնի», «եթէ երկաթը տաք է, ձեռքով չեն բռնի»։—«Հոգ մի անիր՝ էլնէ դրամդ պակասի» կամ »Դրամդ ոչ պակասի՝ հոգ մի անիր», բայց չի ասուի «Հոգ մի անիր՝ դրամդ ոչ պակասի», և այլն։

Կարևոր և ընտիր վարժութիւն է նմանապէս այն համաղօրների գործածութիւնը, որով կարճ և պղպջ ասացուածները լրացած կերպարանք են ստանում։ Քերականական կազմութեան դժուարութեանց կէսը այդ ձևերի անծանօթութիւնից է ծագում։ «Չէր ծնած, ասա ու վերջացրու», «Վայ պաս ուտողին», «Նեղը-նեղն էլ ընկնի, ջուր տուր մի խմիմ», սրքա հարկաւ քերականական հանելուկներ են, մինչև որ չը բացատրուի մերձաւորապէս, թէ «Մեր տարակոյսը վարատելու և էլ չը տանջելու համար օրհնում ենք հօրդ յիշատակը», «Ով որ պաս ուտէ, Աստուծոյ պատժից չի պրծնի», «Գիտեմ որ նեղութիւն է, ես պահանջում, շնորհք արա»։ Խոշոր դոյականների գործածութիւնը լիակատար զեղչումն է — «Որմնադքար», «Քար, որից պատեր (որմեր) է շինվում»։ Շատ նշանաւոր համառօտութիւն է, երբ որ նախադասութեան անդամները վերացական դոյականների են փոխվում — «Ինչ որ տեսնում ենք, այն հաւատում ենք», «Ճեմիլքը հաւատք է», աւելի դժուար է այսպիսի փոխոխութիւն ձևի «Գտակը հանեց, ջրեց գետնի վերայ, համբուրեց իշխանի ոտքերը», «խոնարհեցաւ իշխանի առաջ»։

Նախադասութեան մէջ բառերի և անդամների կարգը շատ տարբեր տեսակներով է դասաւորվում։ Երբեմն ամենայն ազատութեամբ բառը բառից առաջ և յետոյ կարող է դրուիլ, երբեմն որոշ տեղ է պահանջում։ Խանաստեղծի խօսքը. «կամ թէ նո՞ր հրապուրեմ ճպռոտ, պլշած աչերը», սխալ կը հասկացուի, եթէ հարցնենք «՞ո՞ր հրապուրեմ, այլ պէտք է հարցնել՝ «ո՞ր աչքերը հրապուրեմ. իսկ այն ժամանակ նախադասութիւնը այսպէս կը ձևանայ — «կամ թէ հրապուրե՞մ նոցա ճպռոտ, պլշած աչերը։ Աւելի հեշտ է սեռականի և տրականի որոշումը հասկանալ այսպիսի օրինակներում. «Թագաւորի թուղթը մատուցին», «Թուղթը թագաւորին մատուցին»։

Ուսուցիչը լաւ պէտք է կշռադատէ իւր կրթութեանների արժէքը և պահանջ կարդրը։ Նա անշուշտ չի կամենայ հեշտ փոխոխութիւնները շուտ շուտ կրկնել աշակերտի հետ, ոչ էլ անյարմար հանդամանքներին չափազանց կշիռ տալ։ Նա պէտք է գիտենայ, թէ ո՞րպիսի փոխոխութիւններ աւելի նպատակ են բան սովորելու և այնքան կարևոր են նախադասութեանց կազմութեան համար, որ արտայայտութեան ձևը դոցա միջնորդութեամբ աւելի որոշ, մեկին, ճիշդ, համառօտ և ազդու է դառնում։ Աւելորդ չէ, որ նա երբեմն ուշադրութիւն դարձնէ նաև ճարտասանական ձևերի վերայ, ինչպէս որ են՝ ենթակայի և ստորոգեալ շրջումն կամ անդրադարձութիւն *), հարցմունքը, բացականչութիւն,

(*) «Ուսուցչական կարեւոր պարտաւորութիւնները աւելի յաջողակութեամբ են կատարվում, եթէ քնական եւանդի պժը մեծ է։ || աւրիշ ոչ մի գործում հարկաւոր

փոխաբերութիւն *), փոխանունութիւն **):

Բայց լեզուի համազօրներից ոչ մէկը այն ոյժը չունի, ինչպէս մի իրողութեան հակապատկեր ցուցումը կամ ներհակ հաստատութիւնը. «Առաքինութիւնը արժանի է գովեստի», «Մոլութիւնը արժանի է նախատանաց», — «Եռապատիկ զրահաւորուած է այն մարդը, որ արդար դատի համար է մարտնչում», «Անզէնք է նա, ով որ անարդար գործ է պաշտպանում», — «Ջերմութիւնը նպաստում է բուսականութեան, ցրտութիւնը նուազեցնում է նորա զօրութիւնը». Այս փոփոխութիւնները քերականութեան սահմաններից դուրս են, դրա տրամաբանական և միանգամայն ճարտասանական բնութիւն ունին. Բայց ուսման համար ամենամեծ նշանակութիւն են ստանում, մանաւանդ եթէ աշակերտը ինքը մասնակցում է, որ այդպիսի փոփոխութիւններով մտքին որոշ պարզութիւն տայ. «Եթէ առաքինութիւնը արժանի է գովեստի, ի՞նչ բանի արժանի է առաքինութեան ներհակութիւնը, մոլութիւնը». Երևի թէ ամենայն ուշ տարեկան աշակերտ չի դժուարանայ իսկոյն պատասխան տալ, —Ուրիշ տեսակ հակադրութիւններ են, եթէ Էլէյֆուն-ը անմիջապէս ղգացնել ենք տալիս. «Մենք ձեզանից նեղացած ենք, պարոն», — «Ես ինքս լսնացած չեմ, պարոններ».

Շատ տեսակ փոփոխութեան եղանակներ արդէն յիշատակեցինք. ցանկալի է որ իւրաքանչիւր կարդը առանձին խնամով փորձուի և գործ դրուի. Ահա այդպիսի փոփոխութեանց ամենաեռեվ օրինակների մի շարք. Արեգակը դուրս է եկել, յայտնուեցաւ, նա բարձրացել է, հորիզոնում երևեցաւ, երկնքի մէջ իւր երեսը լացել է, վերստին մտաւ իւր իշխանութեան մէջ. Եղ չը կայ, վերջացաւ նորա փառքը, հորիզոնի տակ մտաւ, ծածկուեցաւ, մայր մտաւ. Ճառագայթների վերարերեալ բառերը աւելի ևս բազմաթիւ են, — Ծննդեան, կեանքի և մահուան նկարագրող նոյնանիշները անսպառ են. Նոցա աղբիւրը եղել են անթիւ աներ մար իրողութիւններն ու մարդու արձակ երևակայութիւնը. Հէնց միայն մահուան մասին՝ Հոմերոսից սկսած մինչև մեր օրերը՝ բանաստեղծները չեն դադարում շարունակ աճեցնել այդպիսի արտայայտութեանց պաշարը.

(Շարունակելի)

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

չի լինում այնքան անգամ միշտ մի եւ նոյն բաները կրկնելու, ինչպէս ուսուցչութեան տասպարիզի մէջ». Այս նշանակում է՝

ուսուցչութեան գործի համար հարկաւոր է բնական եւանդ.

բնական եւանդը մի պայման է արգիւամբ ուսուցանելու համար,

(*) Ձոր օր. Աբիւժ է, փոխանակ՝ քայլ է,

(**) Ձոր օր. Հարիւր առաւօտ, փոխանակ՝ հարիւր ճաշ,

ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

(Շարունակութիւն)։

ԺԱ. ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

Կաթուղիկէից դէպի արեւելք և Ս. Լուսաւորչից դէպի հիւսիս արեւմուտք գտնվում է Ս. Փրկիչ եկեղեցին, որ շինել է Ապուղամրենց Ապլ-զարիպ հայ մարզպանը 1035 թուին։ Եկեղեցին արտաքուստ եօթն որմնանկիւն իսկ ներքուստ ութ կիսաբոլորշի ունի։ Դեղեցիկ ինքնատիպ ճարտարապետութեամբ շինուած եկեղեցի է։ Այս եկեղեցին նորոգել են 1173 թուին Արծոյ երեց Տրդատ և իւր Խուշուշ կոչեցեալ կինը։

ԺԲ. ՄՂԻՒՆ։

Կաթուղիկէից դէպի ի արեւմուտք Ախուրեանի ձորաբաշին գտնվում է շինութիւնը, որ վերջը Մղկիթ է դարձրուած եղել ինչպես ցոյց է տալիս հիւսային արեւելեան անկիւնին կից մինարէթը. բայց սկզբում, որոշ բան պէտք է եղած լինի։ Ոմանք կաթուղիկոսարան են կոչվում այդ շէնքը, ոմանք էլ, բարձրագոյն դասարան և այլ տոյնպիսի մի հաստատութիւն. սակայն ինչ և լինի՝ այդ շինութիւնը հասարակական մի հաստատութիւն է եղել նախ քան Մղկիթ դառնալը, և այն՝ քրիստոնէական, որովհետև արեւմտեան կողմը ներսի կողմից եղծուած խաչի տեղ կայ պատի վերայ, և արեւմտեան կամարի վերայ ևս խաչանիշներ են դուրս բերուած։

Ըստ իս՝ այդ շինութիւնը եղել է ժամատուն. տաճարը երևի եղել է այն տեղը, որ այժմ արեւելեան կողմը նկատվում է իբրև քարերի մի կարկառ։ Ոմանք կարծում են թէ այդ շինութիւնը բնակարան է, որովհետև ներքնայարկ ունի, սակայն

ներքնայարկ համարուածը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի գաւառակաթիւն որ գոյացել է Ձորաբաշիյ այդ ժամանակ պատը բարձրացնելիս մինչև գեղջի վնակերևութիւնն հասնելը, այնուհետև կամար ձգուած է նոյն շինուածքեան յատակը պատրաստելու համար: Թէ շինուածքիւնը և մինարէթը իրար հետ կապ չեն ունեցել այդ այժմ ևս յայտնի է, որովհետև մինարէթի նոր կցուած և շինուած լինելը թէ շինուածքեան քարը և թէ ձևը ցոյց են տալիս. Մինարէթի արձանագրութիւնը Ջիւթի տառերով վերաբերում է 1072 թուին. երևի՝ Շեհատեհանց ցեղապետ Մանուչէ այս շինուածքիւնը Մզկիթ դարձրած լինի կամ Չաբարեանք Մզկիթը ժամանակն դարձրած, որովհետև այս շինուածքեան հիւսիսային որմի վերայ կան թէ արաբերէն և թէ հայերէն արձանագրութեան հետքեր:

ԺԳ. Մելիքաբեգ կամ Նեղուն բեգ անուն.

Անւոյ հարաւային արևմտեան անկիւնում Ախուրեանի և Ծաղկոցաձորի մինչև բարձրութեան վերայ է Անւոյ միջնաբերդը որ պարիսպներով շրջապատած է եղել: Այժմ ամբողջովին շինուածքեանց քարակարկառ է. շինուածքիւններից այժմ նկատելի են երեք եկեղեցւոյ ուերակներ, մէկը անյայտ իսկ միւսները յանուն Ս. Գեորգայ և Ս. Սարգսի:

Բացի յիշատակեալ հնուածքիւններից Անիում կան հնուածքեանց դեռ էլի շատ մնացորդներ, քաղաքից եկեղեցի հասլն տակայն, դրա այնքան ջանաւոր չեն և արձանագրութիւն չունին որով յայտնի լինի թէ ու ժամանակ և ով է շինել: Ախուրեանի ձորամիջին կայ պատռտուած եկեղեցի մի քանի մատուռներով. Ծաղկոցաձորի ամբողջ ալ և մնացած ձախ ափը արհետական այրերով պատած է, որոնք եղել են բնակարան փիանուածքի, եկեղեցի, դերեզմանոց և այլն, տակայն դրա հետ պատմութիւն չունին, կամ եթէ ունին, հետազօտուած չէ եղել: Նայելով Անւոյ պարսպապատի փոքր տարածութեան. տեսածը Անւոյ մասին թէ քաղմամարդնութեան և թէ շատ եկեղեցիներ ունենալուն հա-

մաը չէ արդարանում տակոյն Անին միայն սպարիսպներով չէ շրջափակուել, Անին տարածուած է եղել մինչև Հոլուբ եկեղեցին և դէռ ասելի Հեռի տէրի քան 2 վերստ տարածութեամբ, այժմեան Թաւրքի Անին որ պարսպից դուրս է և արևմտեան կողմն է ընկնում գործածել հին Անուայ մասն էր ինչպէս ցոյց են տալիս հնութեանց մնացորդները։ Այսքանով վերջացնում ենք Անուայ մասին տեղեկութիւնները։ Անուայ հնութիւններին հակոց վանահօր և միաբանութեան պիտոյքը լցնելու համար 190 դէսիատին վարելահոդ և արօտատեղի է յատկացրած նոյնպէս և ծաղկոցաձորի մէջ վտակի ալ ափի վերայ փոքրիկ տարածութիւն բանջարանոցի համար։

Բ.

Մաղաս բերդ.

Անիից դէպ ի հարաւ արևմուտք, Ախուրեանի գործածել ալ ափին անմատչելի ժայռի վերայ շինուած է Մաղաս բերդը։ Մաղաս բերդը ունի կրկին պարսպներ արտաքինը գոյ՝ իսկ ներքինը՝ բարձր։ պուրդը ալ կողմն է։ երկու պարսպի մէջ ունի խրամատ, իսկ ներքին պարսպից մինչև գետը՝ անցք։ Եբեք կողմից շրջապատած է Ախուրեանի անդնդախոր ձորպտոյտով։ Բերդի մէջ բաց ի այլ շինութեանց մնացորդներից՝ երեք եկեղեցիների հետք կան։ Շատ ժամանակ չէ որ Մաղաս բերդը ամայացած է։ Սկզբում տիրում էին պարսիկները և այս՝ մինչև 1638 թիւը, ըստ տեղւոյ Զաքարիա պատմագրի. այնուհետև անցաւ Տաճկաց ձեռքը, մինչև որ 1877 թուին ռուսները ազատեցին Կարսի նահանգը, տիրեցին և Մաղասի աւերակներին։ Մաղաս բերդը Անիից շատ հեռի չէ. հազիւ վեց վերստ հեռաւորութիւն ունենայ։ Մաղաս բերդը շինել է Մախազ անն վեցերորդ դարու վերջերում Մօրիկ կայսեր հրամանով, ուստի և շինողի անուամբ կոչուել է Մաղաս բերդ։ Առնելով արաբական տեղեկութիւններից, որ կան պարսպի վերայ կարծում են որ դա պարսկական բերդ է, ինչպէս Կովալևսկի և Մարկով

իրանց «На горахъ Араратскихъ» ուղեգրութեան մէջ յիշում են։ Սակայն բերդի միջի եկեղեցիների մնացորդները և պատմութիւնը (պատմ. իսչին Հայոցնեաց, և Զաքարիա սարկաւագ ԺԷ. դարում) ինչպես յաւալջ է բերում Հ. Ալիշան (Շիրակ. երես 124)։ յայտնի ապացուցանում են որ հայ իշխանութեան անկումից յետոյ սիրող ազգերը, որոնք մահմեդական էին, իբրև ամուր տեղ գրաւել են և Մաղաս բերդը և նորոգութիւններ են արել։ Մինչև դարուս սկիզբը, ինչպես պատմում են մերձակայ բնակիչները Մաղաս բերդ մարդաբնակ է եղել։

Դ.

Ալոճան (ԱլՃ)։

Արջոյ առիճ (Ալաջա) լերան կողին հարաւային կողմից գտնվում է պարսկաբնակ Ալէմ գիւղը։ որի մէջն է Ալամանայ եկեղեցին Ս. Անանէ անունով, որ շինուած է Հերակլի թագաւորութեան 27-րդ տարին, Շիրակայ և Արշարունեայ Տէր Ներսէհի օրով 636 թուին վրկչի։ շինողն է Գրիգոր Եղուսատր*) (illustris) և իւր կինն Մարիամ։ Նորոգութիւն արել է վանքիս վերայ Ա. շուտ ողորմածի դուստր և Վրաց թագաւորի կինն Սոփիա թագուհին Ծ-րդ դարում։

Դ.

Բաֆնայր (Ղ-ուղիջա)

Ալամից դէպի աւերակք և Անիից դէպի հիւսիս արևմուտք մօտ վեց վերստ հեռաւորութեամբ Արջոյ առիճի հարաւային կողմին գտնվում Բագնայր (Բգնէր, Ղ-ուղիջա)։ Բագնայրի եկեղեցին շինել է Սմբատ Մարգիսորդի որդի Վահրամ իշխանի 1009 թուից յանուն Ս. Աստուածածնի։ Բայ ի բուն տա-

---

(*) Պատուանուն—Լուսափայլ, Պայծառ։

ձարն ու գաւիթը, մօտիկ ուշի և երկու փոքրիկ մատուռներ։ Տաճարի հարաւային կողմից եղել է սիւնազարդ սրահ։ Թէ ե՞րբ է ամայացել այս վանքը՝ յայտնի չէ, բայց մինչև ԺԹ-րդ դարը առատ նուէրներ են եղել վանքին։ Յայտնի վերջին արձանագրութիւնները վերաբերում են Հայոց ՉԺԱ. և ՉԺԲ. (1266) թուականներին։ Վանքս գտնվում է Ղուզլիջա թերքաքնակ գիւղում, և շատ խղճալի վիճակի մէջ է։

Ե.

Ղօշավանք կամ Հոռոմոսի վանք.

Ղուզլիջայից յետս դառնալով դէպ ի արևելք և Անուշ հիւսիսային կողմից անցնելով, Անիից դէպ ի արևելք մօտ վեց վերստ հեռաւորութեամբ Ախուրեան գետի ափին մի թերակղզու վերայ գտնվում է Հոռոմոս կամ Ղօշավանք։ Անիից դէպ Ղօշավանք չը հասած ճանապարհի վերայ գտնվում է մի կամար երկու կողմից գմբէթարդ բարձրացած, և վանքն իւր այժմեան Ղօշավանք անունը ստացել է այս զոյգ գմբէթներով կամարակապից։ Աւանգութիւնն ասում է որ Թագաւորների և ուղղանուս խորհրդականը Հոռոմոսի վանքումն էր. երբ Թագաւորն ու ուղղանին հանդում էին այս կամարակապին, Հոռոմոսի վանքին զանգակները հնչեցնում էին հանդիսաւոր ընդունելութեան համար։ Այս գմբէթարդ կամարակապը 1102 թուականից առաջ շինուած է եղել, ինչպես ցոյց է տալիս մի արձանագրութիւն նոյն և Հայոց ՇՇԱ. թուականը կրող։

Այս գմբէթաւոր կամարակապից կամ ինչպես Հ. Ալիշան անուանում է խօշուն-ից դէպ ի հարաւ արևելք հազիւ մի վերստաչափ հեռաւորութեամբ գտնվում է Ղօշա—կամ Հոռոմոսի իսկական վանքը։

Հոռոմոսի վանքը իւր բազմայարկ հոյակապ շինութիւններով ապացուցանում է որ ունեցել է փառաւոր անցեալ։ Հոյակապ շինութիւններից առաջինն է տաճարը և ուշագրաւ գաւիթը, ուր այժմ կատարվում է աստուածային պաշտամունքը։ Հոռո-

մասի վանքի դպրաքիւնը 935—40 թուին է։ Հառամոսի վանք կոչուել է նորա համար՝ որ վանքի սկզբնական շինութիւնքն եղել են Յուհաննաւանից կրօնական հալածանքի պատճառով փախած Հայ հոգևորականները իրանց առաջնորդ Յովհաննէսի հետ։ Բայց ի բուն սուճաքից և դաւթից, ինչպէս ասացին, Հառամոսի վանքը նշանաւոր է իւր բազմայարկ հոյակապ շինուածներով։ Գոյանից նշանաւորներն են՝ շինութիւնը որ այժմ նշխարատունն կամ ըստ ոմանց՝ խորհրդարան է կոչուում։ Ը. նշխարատունից պէտք է հարաւ գտնվող մի ընդարձակ շինութիւն, որ ըստ ամենայնի գաւթի նման է, սակայն սուճաքը պէտք չի արևելք չը լինելուն համար և պէտք չի սուճաքը սանող գաւուը ոչ միայն փակուած՝ այլ և տեղը մի բարձրաբանգահ լինելուն չամար այժմ տեղի է տալիս ստորգուսուքեան, թէ այնպէսք գաւիթ է եղել թէ մի այլ հասուածութիւն։ Ա. յժմ նշխարատան գեղեցիկ ճակտը իջած է և այս ընդարձակ շինութեան ճակտն և պուչ է մի քանի սաթուց յետոյ իջնի։ Թողնելով այլ շինութիւնները յիշենք որ բուն սուճաքի աջ և ձախ կամ հիւսիսային ու հարաւային կողմերում կան մատուռներ, որոնք քայքայուած են և շուռով կը փլչին. նոյն ինքն բուն սուճաքի արևելեան ոտքից, պրսի կողմից, քարերը խախտուած են և մի քանի չաւ էլ վայր ընկած։ Վանքը հիւսիսային կողմից ունի որմաւոր քարերով բարձր պարիսպ, մատուռների և սուճաքի կից շինութիւնը արևելեան կողմից պաշտպանում է վանքը, հարաւային կողմից անգընդակոր ձորն է, իսկ արևմտեան կողմից՝ եղել են կրկին պարիսպներ, բայց այժմ յետքն չատիւ է նկատւում։ Վանքիս մօտն է Համամունքի գիւղը Հայ բնակիչներով։

Մինչև վերջին ժամանակները Հառամոսի վանքը լինելով աթոռ Արևմտեան չիրակայ ու ունենալով ընդարձակ երկրագործութիւն շէն ու պայծառ է եղել, իսկ այժմ չունենալուվ ոչ մի եկամուտ բացի մի ջրաղացի արդիւնքը և մի քանի օրավար հող գիւղացւոց հողերի մէջ, վանահայրը հողահարկ է վճարում, վանքը շատ խեղճութեան մէջ է։ Ա. յժմ Հառամոսի մեծափառ ուխտի միաբանութիւնը կազմուած է միայն մի վար-

դասեակից՝ որ գիւղացւոց հոգևոր պէտքերուն է հոգաւոր, որովհետև քահանայ չունին գիւղերնիք և անդքնութեան ոչ սահմանադրութեան պատճառով չեն էլ կարող քահանայ պահել։ Հին արձանագրութիւններից, որ մնացին, վերջինը պատկանում է Հայոց ՉԻԶ. թուին։ Վերջապես իրրև յետնագոյն արձանագրութիւն հներիս է արձանագրութիւնը, որով Զաքարեանց տէրից կատարած պատրան 1336 թուին նորից վերահաստատում է իր նախնիքներից հաստատուած տուրքերը։

Հառամոյ երկրից (Յունաստանից) փախած հայ կրօնաւորները իրանց առաջնորդ Յովհաննէսով այս վանքը հաստատել են լինել «անցաւոցաց և ճանապարհորդաց հանգիստարան», ուր պատսպարւում էին օտարները, ազգատները և անցաւոր ճանապարհորդները, ուստի և մեծ ընդունելութիւն գտած լինելով ազգի մէջ, մեծամեծ նուէրներ էս ստացել է սկսեալ Թագաւորից մինչև յետինը ինչպէս տեսել են ասկից արձանագրութիւնները։

Ն. Ադիշան աւանդում Ասողիկից կարծում է որ Յունաստանից եկած հոգևորականների շինած եկեղեցին որ Շողակաթ էր կոչւում, 982 թուին այրեց պարսից ամիրա Ապլհասան գիլմասանիկ, թեև ստուգութեամբ Կարսի Թագաւոր Մուշեղին՝ որ կամենում էր իր եղբայր և Անեայ Թագաւոր Սմբատ Բ-ից վրեժ առնել։ Այժմեան տաճարը վերագրւում է Յովհաննէս Թագաւորին (1038 թուին), ինչպէս տեսել է ասկից արձանագրութիւնը։

Անեայ ատերմանքից յետոյ ինչպէս երևում է այս վանքն էլ տնայացել կամ անշքացել է մինչև Հայոց ՌՃԼԴ կամ Փրկչի 1685 թուականը, երբ Տիգրանակերտցի Դանիէլ վարդապետը տեղւոյն Խաչեան օղլու Մանասիա ազգի իշխանութեան ատեն օրով նորոգում է։

Հառամոյ վանքը գտնւում է ձորաքաշին մի հրաբանջանի վերայ, խոր ձորի մէջ, Հառամոյ վանքից դէպի հիւսիս արևելք ½ վերստ հեռաւորութեամբ գտնւում են երկու մատուռներ, Ս. Գէորգ և Ս. Մինաս անուամբ, երևի, Բագրատունի թագաւորների հանգստարան եղած. որովհետև Ս. Գէորգ մատուռի հարաւային կողմը գտնւում է օրօրոցաձև մեծադիր մի գերեզ-

ման որ ժամանակին արևելեան կողմից ունեցել է մեծ խաչքար ինչպէս նովսրութիւն էր առհասարակ, այժմ խաչքարը չը կայ բայց պատռտանգանը դեռ կայ։ Գերեզմանի վերայ կոպիտ վրացերութեամբ կայ մի վերատեսութիւն որից երևում է որ Աշոտ Թագաւորի գերեզմանն է։ Ս. Գէորգ եկեղեցին շինել է Գագիկ առաջինն ինչպէս գրում է Հ. Ալիշան ի. իր դարձ սկզբում։ Ս. Մինաս եկեղեցին ուրեմն հին է քան 983 թուականը որովհետև այդ թուին ընծայութերութիւն է լինում եկեղեցուն որպէս որպէս շինուածի։

(Շարունակելի) ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԷՍԵԱՆ։

ԱԶԳԱՅԻՆ

Ի ՀԳՈՒՇՈՒԹԻՒՆ։

Յայտնութեան կրօնը առաւաճային շնորհք է մարդկութեան առաջ, որպէսզի սա կրօնով գաստիարակուելով և նորանով ղեկավարուելով երջանիկ լինի թէ այս անցաւոր աշխարհում և թէ ապագայ յաւիտենական կեանքի համար իւր պատրաստութիւնը տեսած լինի, որ մարդուս կեանքին նպատակն և նորա ամենամեծ երջանկութիւնն է։ Կրօնի այն նշանակութիւնը միշտ ճանաչուած է եղել և է։ որովհետև սուրբ մարդիկ կրօնական գաստիարակութեամբ զարգացած են միշտ երջանիկ եղած են մինչև իսկ աշխարհիս ծանր բերմունքների և հանգամանաց մէջ։ վանդի կրօնը մարդուս հոգին և դորա ամեն կարողութիւնքը կազդուրողն և նրանց համաձայն Աստուծոյ կամայ ի բարին ուղղողն է։ կրօնը մարդուն Աստուծոյ հետ սերտութեամբ կապողն է, կրօնը մարդուս իւր մերձաւորին եղբայր ճանաչեցնողն է, կրօնը շաղուածութեանց մէջ միխիթարողն է և յուսահատութիւնից, սուրբ բոլոր հետևանքներով, ազատողն է, կրօնը յաջողութեան մէջ մարդուս ամբարտաւանութիւնն և անձնասանութիւնը զսպողն է, կրօնը մարդուս քաջքն ամ-

քող և վարքը սրբող առաքինի է։ Կրօնական ուղղութեան և կրօնական զգացմանց թուլութիւնը — մարդկութեան բարոյական մահն է։ Եւ կրօնը բացակայ է, այնտեղ բարոյականութիւն չկայ։ Մի ժողովրդի համար անբարոյականութիւնից էլ աւելի մեծ թշուառութիւն կլինի։ Թշուառութիւն է մեծ, որովհետև այդ վիճակի մէջ գտանուող ժողովրդոց Աստուած էլ թողնում է, իւր հայրական խնամքից զրկում է, թոյլ տալով նրան իւր անօրէնութեան մէջ մնալու մինչև կզղջայ, կդառնայ։ Սորա համար էլ իմաստուն Սողոմոնը ասում է, «Ակիղէն իմաստութեան երկիւղ Տեառն»։ Մարդս իրրև բանական արարած իմաստութեամբ պիտի ապրի, իմաստութեամբ դիակարաւի այս կեանքի մէջ և ահա այդ կենսական իմաստութեան հիմքն Աստուծոյ երկիւղն է, վասնզի ոչ որ Աստծուց չի երկնչիլ, նա մարդկերանցից էլ չի ամաչիլ — հետևաբար ամենաստոր ափսոփելի անբարոյականութիւնն է։ Մարդկութեան ամբողջ պատմութիւնն ապացնեցիս վկայ է։ Կրօնի այս նշանակութիւնը միշտ հասկացել են մեծ և ազնիւ անձինք ու միշտ նպաստել են ժողովրդոց կրօնական դաստիարակութեան, նոցա իսկ երջանկութեան համար։ Պատմութեան մէջ ամենանշանաւոր մի անձի խօսքն է, «Եթէ աշխարհումս կրօն չլինէր, ժողովրդոց բարօրութեան համար, պէտք էր կրօն ստեղծել»։

Քրիստոնէական կրօնն, ասացինք, Աստուածային շնորհք է, վասն զի յայտնեալ կրօն է, Աստուծոյ բարութեամբ միայն մարդուս բաժին ունած աստուածային ճշմարտութեանց դուռն է, որոնք ոչ մարդկային մտաց կինթարկուին և ոչ աչաց տեսողութեան, այլ միայն հաւատոյ աչաց տեսանելի են. ուստի և մարգս, ամենայն հնազանդութեամբ Աստուծոյ կամաց, անպայման կերպով պիտի հաւատայ այդ ճշմարտութեանց, ճանաչելով իւր տկարութիւնը։

Աստուած ամեն քրիստոնէական եկեղեցոյ պաշտօնէից վերայ, դէտ կացուցի զքեզ տանը Իսրայէլի, ասելով, պարտք է դնում իրանց հօտերին այդ յայտնեալ ճշմարտութիւնքը քա-

բողելու, նրանց իբր պատուիրանների հիման վերայ գանտիտրակելու, որպէս զի մարդ իկ թէ այս աշխարհումն երկանիկ լինին և թէ յաւիտենական կեանքը ժառանգեն։ Ամէն եկեղեցական պաշտօնեայ իւրաքանչիւրն ունի այն մասին Աստուծոյ առաջ։ Հայաստանեայց եկեղեցւոյ հայրապետներն այս ծանր պատասխանատուութիւնն Աստուծոյ առաջ ընդունելով և իրանց հօտի երջանկութեան նախանձախնդիր լինելով միշտ հոգացել են հայ ազգը սերտութեամբ կապելու եկեղեցու և սորա վարդապետութեան հետ։ Ամեն ջանք թափել են կրօնական պատասխանատուութիւն և ուղղութիւն տալու իրանց հօտին, սկիզբն խանատութեան երկիւղ Տեառն ճանաչելով։ Ջանացան ժամանակ այս ջանքն, քան հանգամանաց և ժամանակի բերմանց, իրագործել են այլ և այլ եղանակներով։ Այսօր այդ միջոցներից գլխաւորն են մեր հոգևոր և եկեղեցական—ծխական պարոցները, որոնց գլխաւոր նպատակն է, ընդհանուր զարգացման հետ, հանդամանուն կրօնական բարոյական դաստիարակութիւն տալն ազգին։ Մեր նուիրեալ եկեղեցւոյ հայրապետներն ազգն այս երջանիկ վիճակին հասցնելու համար գործել են գլխաւորապէս իրանց առօրեայ բերած եկեղեցական պաշտօնէից միջնորդութեամբ՝ առաջնորդներ, չաջոյդներ, քարոզիչ վարդապետներ, քահանայք և իւերջոյ քարեպաշտ աշխարհականք՝ ուսուցիչք, վարժուհիք, հոգաբարձուք և այլ նպատակին ծառայելու համարեն կարգած։ Բայց դժբաղդաբար ի սեպիս տեղիս գտանուում են այս վերոյիշեալ անձինքներից ոմանք, որոնք անհաւատարիմ են գտանուում իրանց պաշտօնեների մէջ և չեն արդարացնում քարձրագոյն հոգևոր իշխանութեան վստահութիւնը կամ իրանց թուլութեամբ, կամ անտարբերութեամբ և կամ իրանց ուղղութեամբ և գաղափարներով, և կամ կաստակեալ հոգւով չնպաստելով որ հոգևոր իշխանութիւնը տուած է հրահանգներ ամենքի համար։ Այդ հրահանգներն որոշում են թէ առաջնորդների, թէ հոգաբարձութեանց, թէ ուսուցչական ժողովների և թէ տեսուչների ու ատոգ ուսուցիչների իրաւունքներն ու պարտականութիւնքը։ Սոցանից

ոչ ոք չունի իրաւունք դպրոցների ուղղութեան մասին, որ խիստ կրօնական—քարոյական ոգուի լինին, որևէ պատասխանատուութիւն անելու: Եթէ մի ուսուցիչ, վարժուհի կամ հոգաբարձու անկարող է զգում իրան դպրոցի այդ ուղղութեան որքանութեամբ ծառայելու, այդ ոգուին ինքն ոգուի չմասնակցի հայ դպրոցի գործին, անհատասարմանութեան և եկեղեցու ու ազգի շահերին վնասողի անունը ստանալու երկիւղից: Մանաւանդ ներկայումս ծանր պատասխանատուութիւն կայ գերապատիւ առաջնորդների, բարեշնորհ յոյժարգների և պատուելի հոգաբարձուների վերայ, շատ արթուն և խիստ հսկող լինելու, որպէսզի թշնամին Ձարը նիւթապաշտութիւնն իբրև հատու զէնք ձեռքն առած ամեն կերպ աշխատում է խարխլելու մտքով, պղտորելով դանազան մտայր գռզոփարներով և վարդապետութիւններով մանկանների միտքն ու մոլորեցնելու նրանց երջանկութեան ճանապարհից, աստուածային պատուիրանների անհատասարիմ նրանց անելով: Թող ամեն ոք գիտակ լինի, որ այսուհետև հոգևոր բարձրագոյն իշխանութեան կողմից խիստ պատասխանատուութեան կենթարկուին ամեն անձինք, որոնք հայ դպրոցի ուղղութեան և նորա մէջ գտնուիր մնացած սերնդի կրօնական կրթութեան որքանութեամբ և հատասարմանութեամբ չեն ծառայիլ: Ի զգուշութիւն ամենեցուն և ապագային ասկա այստեղ հրատարակում ենք հոգևոր բարձրագոյն իշխանութեան կարգադրութիւնը Կանճակի Ս. Յովհաննէս եկեղեցու երկսեռ դպրոցների մէջ գործող անձանց մասին, որոնցից սմանք իրանց անպատշաճութեամբ, սմանք անտարբերութեամբ և այլք իրանց վնասակար ուղղութեամբ և գաղափարներով վրդովեցին դպրոցի անմեղ մանկանց միտքն և յուզեցին բարեպաշտ ժողովրդոց ազնիւ զգացմանց խաղաղութիւնն և սասիկեցին հոգևոր իշխանութիւնը ցաւօք սրտի անելու առաջին անգամ իւր մեղմ և հայրական կարգադրութիւնն, որ է.

Ուսումնարանական մասն Սինոդի Սրբոյ Էջմիածնի՝ ըստ բարձու հրամանի Նորին Սրբութեան՝ Վեհափառ Հայրապետի Ազգիս՝ ուշի ուշով ընդունել զգործ քննութեան՝ արարելոյն ի բարեկրօն Դ. Լևոնդ աւագ քահանայէ Խարազեանց, որ վասն խոհուեմութեան և վրդովման ժողովրդեան յերեսաց անխոհեմութեանց ուսուցչաց և ուսուցչուհեաց եկեղեցական—ծխական ուսումնարանաց Ս. Յովհաննէս եկեղեցւոյն Հայոց Գանձակայ, գտեալ է նախ՝ զի աւագ ուսուցիչն տղայոց ուսումնարանի՝ Ներսէսն Դաւթեանց թոյլատրեալ է ուսուցչաց և ուսուցչուհեաց անպատշաճ և թիւր բացատրութեամբ ինչ ինչ բանից պղտորել զանմեղ միտս աշակերտելոց, ի մանկավարժական ժողովս կուսակցական ոգւով ղեկավարեալ, պաշտպանեալ է զթիւր, զանհեթեթ և միանգամայն վնասակար կարծիս՝ հակառակս ուղղութեանց ուսումնարանաց մերոց և յանդգնեալ է տալ ի ձեռս աշակերտելոց յընթերցումն գրգռիչ և չարամիտ գրքոյկս։ Երկրորդ՝ զի Տիկին Ումիկեանն Դաւթեանց մասնակցեալ է բաժանման վերոյիշեալ գրքուկաց և տեղի տուեալ է կասկածանաց զինքենէ՝ իբրև զարհամարհող պահեցողութեան և զուարացողէ գոյութեան հրեշտակաց և մարդկային հոգւոց։ Երկրորդ՝ զի Լևոնն Թադէոսեանց տուեալ է աշակերտուհեաց զանտեղի և զանվայելուչ բացատրութիւնս զտարրական սկզբանց պահպանութեան ազգայնութեան և զգոյութենէ չար հրեշտակաց (սատանայի)։ Չորրորդ՝ զի Յովհաննէսն Խաչումեան փոխանակ՝ ըստ իւրումն կրօնուսուցչական վսեմ պաշտաման՝ սիրով և քաղցրութեամբ խաղաղելոյ զյուզմունսն՝ յարուցեալս ի պաշտօնակիցս իւր, ընդհակառակն կուսակցական ոգւով վերաբերեալ յայնս, տեղի տուեալ է առաւել ևս սաստկանալոյ և ընդարձակելոյ և Հինգերորդ՝ զի Հոգաբարձուք և Դիրապատիւ Փոխանորդն տեղւոյն անկարողք և անփոյթ գտեալ են աղգել ի վերայ ուսուցչաց և ուսուցչուհեաց, որով և խաղաղել զխռովութիւնս նոցա և ժողովրդեան։

Վասնորոյ Ուսումնարանական Մասն Սինոդի պատուիրեալ է Նորին Սրբազնութեան վիճակաւոր Առաջնորդին Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի նախ՝ այժմէն իսկ արձակել զՀոգաբարձուս՝ ի Հոգաբարձական և զամենայն ուսուցիչս՝ յուսուցչական պաշտաւնից իւրեանց, դադարել ցուցանել զդասաւանդութիւնս յուսումնարանս՝ յանձնեալս նոցա և զամենատեսակ հաշիւս Հոգաբարձուաց յանձնել երեցփոխանի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ տեղւոյն։ Երկրորդ՝ զուսուցիչսն՝ զՆերսէսն Դաւթեան, զՏիկինն Ումիկեան Դաւթեանց և զԼևոնն Թադէոսեանց զրկել ընդ միշտ յուսուցչական իրաւանց յամենայն եկեղեցական—ծխական ուսումնարանս մեր։ Երկրորդ՝ Յովհաննու Խաչումեան առնել զգրաւոր խիստ յանդիմանութիւն, պատուիրելով նմա ի բաց կալ յանխաղաղասէր ընթացից ի

դաստիարակչական և յուսուցչական ասպարիզի իւրում՝ Հորդորդ՝ զոռ-ճիկս Դաւթեանցի, Ումիկեան Տիկնոջ և Թադէոսեանցի կարճել ի 1-էն յառաջակայ մարտի, Խաչումեանցին վճարել զկէս մասն ռոճկի իւրոյ 31-ն յառաջագայ յունիսի, իսկ միւսոց վճարել զամբողջ ռոճիկս իւրեանց միմիայն վասն յառաջագայ մարտ, ապրիլ և մայիս ամսոց. և Հինգերորդ՝ զԳերապատիւ փոխանորդն տեղւոյն առանձին գրութեամբ հրաւիրել ի զգուշութիւն և յարթուն հսկողութիւն ի վերայ բարոյական և կրօնական ուղղութեանց ինքեան յանձնեալ ուսումնարանաց։

Հ. 623

ի 28 փետր. 1890 ամի.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՔՍ.

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ.

Կանգակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 10 փետրուարի տարւոյս Համարաւ 55, որով Հաստատեցաւ ի պաշտօն նախագահի Հոգաբարձութեան միաստեան տպարոյ ուսումնարանին Հայոց Վեհաշէն գեղջ բարեկրօն Մեծարիւ քահանայի Տէր Գրիգորեանց ի տեղի Պօղոս քահանայի Եպիսկոպոսեանց։

—

Կանգակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 20 փետրուարի Համարաւ 65 յանուն Սինօդի Արեղ Էջմիածնի, որով ի պատճառս մնայուան Առաջնորդին Բեսարաբիոյ կարգեցաւ առաջնորդական կառավարիչ Հոգևոր գործոց այնր վիճակի բարեշնորհ Համազասպ վարդապետն Համազասպեանց ցայլ առանձին կարգադրութիւն։

—

Կանգակ օրհնութեան և գահընակութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 26 նոյն ամսոյ Համարաւ 80, յանուն Գրիգորի Բայանդուրեանց, վասն կատարելոյ նորա յաւետաւետելոյ Շաւնաբարի ղՀայակապ զանգակատուն սեփական ծախսք իւրովք։

—

Ներկայ տարւոյս փետրուար ամսոյ 5-ին հանգեաւ ի Տէր 70 ամաց հասակաւ ՍԵՐԱՎԻԲԷ Եպիսկոպոս Արարատեան, վանահայր Երնջակայ սուրբ Կարապետի վանուց։

Հանգուցեալն էր մին ի ծերագոյն միաբանից Ս. Աթոռոյս, իւր ուսումն առած էր Ս. Էջմիածնի Թառանդատորաց ուսումնարանում, և հմուտ էր հայ դպրութեան. արեղայութեան կոչումը ընդունած էր ի Տաճկաստան յաւուրս երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսի և վարելով առաջնորդական և ուսուցչական պաշտօններ թէ ի Տաճկաստան և թէ աստ ի Ռուսաստան՝ յաւուրս հանդիսացած էր։ 1868 թուականին արժանացաւ եպիսկոպոսութեան աստիճանի երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթուղիկոսից. իսկ 1885 թ. կարգեցաւ վանահայր յիշեալ վանուց ուր և կնքեց իւր մահկանացուն։

Տէր լուսաւորեսցէ զհոգի նորա և հանգուսցէ զնա յարքայութեան իւրում ի դասս արդարոց։

Ընութիւնք Հայրենեաց	—	20
Հոովմէական եկեղեցի	—	80
Հանդէս լացման Հեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	25
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն Հեմական տեսչաց	—	10
Ձայն բազմաց	—	50
Ձայնագրեալ երգեցողութիւնք Թամագրոց	4	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	2	—
Ձայնագրեալ շարական	60	
Ճանապարհորդութիւն Հակատհաուզէնի	—	80
Ճաշոց	60	—
Մաղթանք վասն Հայրապետի աղջիս	—	20
Մաշտոց Ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցաւելուած Թամագրոց Ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Ր. մասն	—	20
Նոյն Կ. մասն	—	20
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	
Պատմութիւն ժողովոց Հայաստանեաց եկեղեցւոյ	—	20
Պատմութիւն Խաչակրաց	—	20
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	20
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերաւոր	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	—	50
Սաղմոս Դաւթի	—	50
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	20
Տեղեկագիր Հեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոց և Վանեցւոց	—	20
Օրացոյց (1890)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Ստացանիլ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղիր։
20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղչուելն կը լինի 20°/₀ին ճանաչ պարտաւորքը գնողի վերայ)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ.

Ամենալի տակ է և Ապրիլի վերջերում լոյս կը տեսնի Պետերբուրգում՝ Երրորդ տպագրութիւնը։

Այս տպագրութիւնը, որ կրկնակի մեծութիւն ունի քան երկրորդ տպագրութիւնը՝ փոխուած, սրբագրած և ճոխացած է նորանոր յաւելուածներով։

Մ. ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ.

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Կազմեց լ—ան Ք՝ Մ. Փափազեանց

Այն մեծածախ ձեռնարկը, կարող է մեզ դասլիճների և հայրենասէրների պատանդ համար դարձ լինել։

Այն Բ. Ալբօմը հարուստ է քան Ա. ը, որոյ մէջ պարունակում է 17 հատ մեծագիր մնքուած լուսանկար պատկերներ — Գեղարքունոյ հնութիւններից, ոսկի անյեալ և ներկայ տեղեկութեամբ, մնքուած տպուած և կազմուած. կազմուածի գինն է 10 րբ. անկազմ 9 րբ. 50 կոպ. ճանապարհածախսով։

Յանձնաժողովներ կարող են դիմել Въ Эчмиадзинскій типографически комитетъ. *կամ Въ* Эчмиадзинскій, фотографу М. Папазянцъ.